12-18 ԱՊՐԻԼ 2024 ՈՒՐԲԱԹ 012(5794)

# Ազգ
Azg

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651

## Ադրբեջանը իսրայելական արտադրության նոր լրտեսական ծրագիր է գնել

Իսրայելի պաշտպանության նախկին նախարարի որդու միջնորդությամբ Ադրբեջանի կառավարությունը երկրորդ անգամ է իսրայելական լրտեսական software ծրագիր գնել, ապրիլի 9-ին իրազեկում է իսրայելական «Հաարեց» թերթի նախկին խմբագիր Ավի Շաֆը: Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ 2020 թվականին Ադրբեջանը իսրայելական Pegasus լրտեսական ծրագրի միջոցով 44 օրյա պատերազմի ժամանակ եւ դրան հաջորդող ժամանակահատվածում վարակել էր Հայաստանում լրագրողների, քաղաքական գործիչների, ակտիվիստների, պետական պաշտոնյաների հեռախոսները:

Անշուշտ չի բացառվում, որ Ադրբեջանն այս գործիքը ոչ միայն Հայաստանի, այլեւ Իրանի դեմ էլ գործածի: Իսրայելը փակել է Բաքվում եւ տարբեր երկրներում իր դեսպանությունները՝ Թեհրանի հնարավոր պատասխան հարվածի երկյուղից: «Լուֆթանզան» մինչեւ ապրիլի 13-ը չեղարկել է Թեհրան ուղիղ թռիչքները:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ. Գերմանիա

## «Նոր Իսրայել» նախագիծը՝ Իրանին սահմանակից Արցախում

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Իրանագետ, Իրանում ՀՀ նախկին դեսպան

Ապրիլի 10-ին Իրանում ազդարարվեց Ռամադան ծոմապահության ամսվա ավարտը՝ Ֆիտր տոնը, որի առիթով Թեհրանում տեղի ունեցած հավաքական աղոթքի ժամանակ, Իրանի հոգեւոր առաջնորդ **Ալի Խամենեին** մասնավորապես անդրադարձել է Դամասկոսում ԻԻՀ հյուպատոսարանի հրթիռակոծմանն ու հայտարարել. «Սիոնիստական չարանենգ ռեժիմը սխալվել է եւ պետք է պատժվի, ու պատժվելու է»:

Հիշեցնենք, որ ապրիլի 1-ին Դամասկոսում ԻԻՀ հյուպատոսարանի հրթիռակոծման հետեւանքով զոհվել են իրանցի բարձրաստիճան զինվորականներ: Իրանը համոզված է, որ ահաբեկչությունն իրականացրել է Իսրայելը եւ իրեն իրավունք է վերապահում դիմել պատժիչ գործողությունների:

Իրանի ու Իսրայելի միջեւ տարբերական բնույթ կրող պրոքսի բախումների նոր իրողության պայմաններում, Դամասկոսում տեղի ունեցած ահաբեկչությունն իր թիվ մեկ թշնամուն մեղսագրելուց բացի, պաշտոնական Թեհրանը հիմնավոր կասկածներ ունի նաեւ, որ Թել Ավիվը մտադիր է «Նոր Իսրայելի» նախագիծը կյանքի կոչել հենց Հարավային Կովկասում:



⇨4

# Նորին մեծություն աղմուկը

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Աղմուկ, աղաղակ, միմյանց ուղղված մեղադրական ճառեր, միմյանց նախշելու վարպետության դասեր՝ արդեն վեց տարի: Եթե մինչեւ պատերազմը դա ապահովում էր տեսարանների ուշադրություն եւ զբաղեցնում էր մարդկանց՝ առանց որեւէ օգտակար դերակատարման, արդյունք ունենալով Արցախի կորուստը, հետագայում, նաեւ՝ երկրի ինքնիշխան տարածքներից կորուստներ, ապա այժմ ոմանց մոտ միայն սրտխառնուք է առաջացնում, ոմանց մոտ՝ սթրես, ոմանց մոտ՝ հուսալքություն: Բայց եւ՝ միմյանց այպանող քաղաքական դասի հանդեպ հիասթափություն՝ բոլորից հավասարապես, նաեւ խթանելով արտագաղթը (ըստ ընդդիմադիր պատգամավոր Արթուր Խաչատրյանի տվյալի՝ անցած տարի երկրից հեռացել է երեսունվեց հազարից ավելի ՀՀ քաղաքացի):

Երկրի անվտանգային խնդիրներն օրեցօր խորանում են, իսկ մեր քաղաքական վերեւներում վերը նկարագրված վիճակն է՝ ամեն օր անհավանական ուժի նոր աղմուկ-աղաղակով, հատկապես ապրիլի հինգի բրյուսելյան եռակողմ հանդիպումից հիասթափության եւ Տավուշից տարածքներ հանձնելու՝ իշխանության նախաձեռնած խոսույթի ֆոնին, հատկապես վերջին խորհրդարանական քառօրյայի ընթացքում: Այս բոլորը դիտող նորմալ մարդուն կարող է թվալ, թե սիրողական մակարդակով փողոցային ներկայացումների մասնակից է:

Ե՞րբ է պետք աղմուկը: Երբ չկան լուծումներ, չկա դիմակայության կամք, չկան խելացի, անձնազոհ որոշումներ եւ այդ որոշումները կայացնելու ունակ մարդիկ: Աղմուկն օգնում է չնկատել բուն իրողությունը: Այն բոլոր դեպքերում, երբ պետք է աղմուկի տակ ինչ-որ բան սողացնել, ինչ-որ բան անցկացնել, ինչ-որ պարտադրանքների ու պարտադրողների կամքը կատարել այնպես, որ աղմուկը ծածկի դա մարդկանց աչքից: Կամ՝ բոլորին թվա, որ համարժեք աշխատում են, այն ահռելի գումարներին համարժեք, որ որպես աշխատավարձ ստանում են պատգամավոր ու պաշտոնյա: Այս է կատարվում իշխանության եւ ընդդիմության օթյակներում:

Տավուշից սահմանազատումն սկսելու գաղափարն ինչո՞ւ է նետվել հրապարակ, երբ սահմանազատման հանձնաժողովի հայկական կողմի համանախագահն ասում է՝ կոմպրոմիս չկա, ԱԺ նախագահն ասում է՝ եթե համաձայնություն ձեռք չբերվի, պայմանագիր ստորագրելու գաղափարից էլ կհրաժարվենք:

Նիկոլ Փաշինյանն էլ ասում է՝ Տավուշի մարզի մեր վերահսկողության տակ եղող տարածքները հանձնելն էլ երաշխիք չի, որ Ադրբեջանը չի հարձակվի, բայց էլի պիտի հանձնենք, որ չհարձակվի: Լո՞ւրջ: Կարծում եք՝ Ասկիպարը նույն Ոսկեպար անվան ադրբեջանական աղավաղումը չի՞:

⇨3

## Եթե Բեռլինը սատարում է խաղաղությանը, պիտի՛ դատապարտի Բաքվի կրակահերթերը

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

Ապրիլի 4-ին ԳԴՀ արտգործնախարարության X-ի անգլալեզու հարթակում տեղադրված լուսանկարը հուշում էր, որ նախարար Աննալենա Բերբոքը ՆԱՏՕ-ի հավաքի շրջանակներում հանդիպել է, Բերբոքի գնահատմամբ՝ «սերտ գործընկեր եւ դաշնակից» Թուրքիայի արտգործնախարար Հաքան Ֆիդանի հետ, եւ ինչպես հակիրճ ձեւակերպումից ենք իրազեկ դառնում, բանակցությունների ժամանակ անդրադարձել են երկու երկրների հարաբերություններին, ինչպես նաեւ՝ «Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության վերաբերյալ հետագա բանակցություններին սատարելուն»:

Սա ապրիլի 5-ին Բրյուսելում կայացած ՀՀ-ԵՄ-ԱՄՆ հանդիպմանն ընդառաջ հստակեցնում է, որ համալրվում է Ալիեւի մտահոգությունները փարատած ԱՄՆ պետքարտուղար Բլինքենի, ապա ԵՄ հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենի հեռախոսազանգերով: Եւ քանի որ ԵՄ մայրաքաղաքում ՀՀ-ին չտրվեց անվտանգության որեւէ երաշխիք, Բաքուն կարող է ապրիլի 5-ից հետո էլ... կրակել: Որեւէ մայրաքաղաքից նրա սանձարձակ վարքը զսպող չկա:

### Խաղաղություն են ուզում

Գերմանիայում. Ամեն օր խոսում են, թե ՌԴ-ն կարող է կրակել ոչ միայն Ուկրաինայում, այլ նաեւ՝ իրենց սահմանների վրա: Այս պայմանական փաստը լուրջ մտահոգության առիթ է դարձել: Գերմանացի հարեւանուհիս ահաբեկված դրա մասին է ակնարկում: Եւ լուռ է, երբ պատասխանում եմ, թե ՌԴ-ի հարձակման վերաբերյալ չկա լուրջ վերլուծություն, փոխարենը փաստն եմ հրամցնում՝ իր երկիրը ձայն չի հանում, երբ ՀՀ-ի վրա Ադրբեջանը կրակում է: Չեզոք է...

Մեր նախորդ հրապարակումներում արձանագրել ենք, որ Գերմանիայի արտգործնախարարությունը երբեւիցե չի դատապարտել Ադրբեջանի հարձակումը Հայաստանի ինքնիշխան տարածքի վրա: Նույն լռությունն է նաեւ Բունդեսթագում:

Ապրիլի 9-ին t-online առցանց լրատվամիջոցի լրագրող Թոբիաս Էսսերը( Tobias Esser), («Ազգի» մեր ընթերցողներին ներկայացրել ենք, որ նա Հայաստանի վրա ադրբեջանական հարձակումից հետո ի թիվս այլ լրագրողների եղել էր Սոթքում, Ջերմուկում, Սյունիքում, Ջինվորի տանը, զրուցել էր արցախցիների հետ, բազմաթիվ հոդվածներով անդրադարձել Բաքվի վայրագ գործելաոճին, սոցհարթակներում միշտ ակտիվ է-Ա.Հ.)X-ում հետեւյալ գրառումն արեց՝ «Վերստին հարձակում Հայաստանի միջազգայնորեն ճանաչված տարածքի վրա Ադրբեջանից՝ ներառյալ Ալիեւի ռեժիմի քարոզչական կեղծիքը»:

Էսսերը զետեղել էր Nagorno Karabakh Observer-ի ներկայացրած քարտեզը՝ կից գրառմամբ, որ ՀՀ ՊՆ-ին հղում տալով ծանուցում էր, թե «Ադրբեջանի կրակահերթի տակ են Արավուսին մերձակա դիրքերը: Բաքուն հաղորդում է, թե իրենց դիրքերն էլ կրակի տակ են եղել, ինչը Երեւանը ապատեղեկատվություն է որակում»: Nagorno Karabakh Observer-ը ապրիլի 6-ին էլ դարձյալ հղում անելով ՀՀ ՊՆ-ին իրազեկել էր, թե «գիշերը Ադրբեջանի կրակահերթի տակ են եղել Մովսեսը, Չինարին, Սոթքը, Վերին Շորժան Կութը, Արավուսը, զորքի շարժ կա Իշխանասարի մերձակայքում», ինչը կրկին X-ի հարթակում արժանացել էր գերմանագիր լրագրողների ուշադրությանը, սակայն ո՛չ Բունդեսթագից, ո՛չ էլ կառավարության որեւէ ներկայացուցչից գրառում չտեսանք:

⇨2

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Անկոչ հիւրը

Երբեմն բանի մը մէջ չես ուզեր մտնել, ի՛նքը քու մէջդ կը մտնէ ակամայ, ճիշդ հիւանդութեան պէս, յետոյ որքան ալ փորձես դուրս վանել զայն, չես յաջողիր: Այդպէս եղան քաղաքական հարցերը, որոնցմէ միշտ հեռու մնացած եմ, գլխացաւէ հեռու մնալու համար: Իմ ասպարէզս մշակոյթն է, արուեստները, մարդկային հոգեվիճակները, բարքերը, կենցաղը...

Սակայն, ներկայ իրավիճակին մէջ ապրիս եւ անհաղորդ մնաս շրջապատիդ անցուդարձերուն՝ անհնար է. քաղաքականութիւնը քաղցկեղի պէս տարածուած է ամէն տեղ, չկայ որեւէ ոլորտ, որ հեռու մնացած է քաղաքական իրադարձութիւններէն: Քաղաքականութիւնը մտած է տնտեսութեան մէջ, մտած է գեղարուեստական միջոցառումներուն մէջ, նոյնիսկ մարզական խաղերուն մէջ, ընդհուպ ողոմպիական խաղերուն, ֆութպոլի աշխարհի ախոյեանութեան... զորն ասեմ, զորն թողեմ: Անկոչ հիւր, որուն դէմ դուռ փակել հնարաւոր չէ:

Այս յառաջաբանը ըրի, որպէսզի բացատրեմ, թէ ինչո՞ւ սկսած եմ յաճախ քաղաքական հարցերը նիւթ դարձնել ակնարկներուս: Թէեւ երկար տարիներ հարիւրաւոր ակնարկներ գրած եմ, որոնց մէջ զուարթախոհութիւնը (հումոր) անպակաս եղած է. այն ատեն Հալէպ կ՛ապրէի եւ բնաւ քաղաքականութեան հետ շփում չունէի, սակայն Հայաստան ապրիլ եւ զերծ մնալ քաղաքականութենէ, յատկապէս ազգային քաղաքականութենէ, անկարելի է:

Լրագրող եղիր եւ մի անդրադառնար, օրինակ, Իսրայէլի վայրագութիւններուն, անսանձ ոյժ մը, որ սանձահարելի չէ երբեք, երբ աջ ու ահեակ կրակ կը թափէ, Պաղեստին, Սուրիա, Լիբանան: Ուր ուզէ՝ կը ռմբակոծէ, յատկապէս իրանեան կէտերը Սուրիոյ մէջ, որոնցմէ վերջինը Դամասկոսի իրանեան հիւպատոսարանի հրթիռակոծումն էր, որուն զոհ գացին իրանցի բարձրաստիճան զինուորականներ: Այսքան տարի է Իրան թշնամական սպառնալիքներ կը տեղացնէ Իսրայէլի վրայ, սակայն ցարդ ուղղակիօրէն ոչ մէկ փամփուշտ արձակած է անոր դէմ, մինչ Իսրայէլ անդադար կը հարուածէ զայն: Եթէ իրանաստեղծ Հըզպալլան սպառնալիք է, անո՛ր հետ հաշիւը թող մաքրէ, ո՛չ թէ Լիբանանի:

Մոռնանք Իսրայէլը: Կարելի՞ է չխօսիլ ռուս-ուքրայինական պատերազմին մասին, որ ամէն նախատեսութիւն գլեց անցաւ: Ի՞նչ ըսել է այս գիտութեան սլացքի դարուն,աւելի քան երկու տարի պատերազմիլ: Անշուշտ պատերազմը Ուքրաինայի դէմ ըլլալէն աւելի, Արեւմուտքի դէմ է, ինչպէս վերջերս յայտարարեց Պութինը թէ՝ ՆԱԹՕ-ի մօտենալը ռուսական սահմաններուն սպառնալիք է Ռուսիոյ, ապա վերջը՞... Պատերազմը մէկ կողմէն լաւ է, քանի ահռելի չափով կուտակուած զէնքերը աղբանոց կ՛երթան, միայն թէ մարդկային զոհեր չըլլան ու քաղաքներ չքանդուին: ( ի՜նչ լաւատեսական փափաք է...)

«Իսլամական Պետութիւն» ահաբեկչական կազմակերպութիւնը, որ ատենը անգամ մը գլուխ կը ցցէ, իր զինեալ յարձակումներով կը զարմացնէ մարդոց, որոնք չեն հասկնար, թէ որո՞ւն կը ծառայէ այս կազմակերպութիւնը, որ խտրութիւն չի դներ իր յարձակումի կէտերուն միջեւ: Բոլոր պետութիւնները դէմ են անոր, բայց ո՞վ է անոր հովանաւորը: Նպատակն ալ յստակ չէ: Մոսկուայի գեղարուեստի Կրոկուս Սիթի կեդրոնին վրայ յարձակումը, ի՞նչ նպատակով էր, Իսթանպուլի մէջ դարձեալ յարձակում, չհասկցանք, չէ՞ որ Էրտողանը այս կազմակերպութեան խթանիչն է: Ինչո՛ւ Իսրայէլը զերծ է այս կազմակերպութեան յարձակումներէն... Ահա՛ քեզի կասկածայարոյց հարցում մը: Կարմիր ծովը վտանգաւոր անցուղի դարձաւ: Հութիները կը հրթիռակոծեն Իսրայէլին զէնք կրող նաւերը: Վնասը համաշխարհային է, իսկ կողքի պետութիւններն ալ, մասնաւորաբար Եգիպտոսը, կը կրեն այդ վնասը:

Ահա՛ այսպէս, ընթացիկ հարցերէն գլխաւորները յիշելով: Բայց ինչո՞ւ հեռուները երթանք ու չխօսինք մեր մասին: Անցեալ շաբաթ էր, որ ԵՄ-ԱՄՆ- ՀՀ սիրալիր հանդիպում մը ունեցան ու միջազգային լրատումիջոցներն ալ լայնօրէն արձագանգեցին: Արեւմուտքը գրկեց մեզ (Պարոնեան պիտի ըսէր «Ուրախ լեր, Պաղտասար աղբար»): Հիմա այլեւս «պաշտպան» ունինք. անտէր-անպաշտպան Հայաստանը Արեւմուտքի գիրկը նստաւ ու այլեւս ապահով է, վախ չունի թշնամի դրացիներէն, հիմա արդէն կրնանք Ալիեւին ջղայնացնելու համար ձեռքով-ոտքով ու ծամածռութիւններով ձեւեր ընել, լեզու հանել... թող ճաթի: Իսկ Պութի՞նը... Ան Ուքրաինայով զբաղած ըլլալուն՝ կրնայ առայժմ ձայն չհանել, բայց, յետո՞յ...

Կրնա՞յ ըլլալ որ մեր քաղաքի ծառահատումները քաղաքական նպատակ կը հետապնդեն... Ի՞նչ գիտնամ, Սաքուրաները ճապոնական բալենիներ են չէ՞...ապա տա՞կն ալ բան մը կայ:

Չէ, քաղաքականութիւնը իմ գործս չէ: Ո՛չ երեւոյթները վերլուծել գիտեմ, ո՛չ ապագան կանխատեսել:

# Եթե Բեռլինը սատարում է խաղաղությանը, պիտի՛ դատապարտի Բաքվի կրակահերթերը

⇨1 Ապրիլի 7-ին The Insider հետաքննական-վերլուծական անկախ հարթակը, որի սեւեռակետում Ռուսաստանն է, եւ որը ԵԽ-ի, Եվրոպական մամուլի (The European Press Prize), Անկախ մեդիայի մրցանակակիր դառնալուց հետո աճող հեղինակություն է վաստակել, ծավալուն հոդված հրապարակեց Ադրբեջանի «խավիարային դիվանագիտության սահուն ընթացքի, եվրոպական պատժամիջոցներից խուսափելու մասին («The hypocrisy of caviar diplomacy: How Azerbaijan still manages to avoid European sanctions»): Մեր թերթի սուղ տարածքում շատ ամփոփ մի քանի մեջբերում այդ հոդվածից՝ Որտե՞ղ են ԵՄ-ի կարմիր գծերը Բաքվի հանդեպ պատժամիջոցներ սահմանելու հարցում, գրում է շվեդ հոդվածագիր Ռասմուս Քանբեքը՝ անդրադառնում արտաքին՝ ԼՂ-ի եւ Հայաստանի հանդեպ ագրեսիային, նաեւ երկրի ներսում այլակարծության հանդեպ Ալիեւի անհանդուրժողականությանը՝ այսպես ձեւակերպելով՝ «Ադրբեջանում ո՛չ Ալեքսեյ Նավալնի կա, ո՛չ էլ՝ Սվետլանա Տիխանովսկայա»: Բայց Ալիեւին պատժելու փոխարեն, նրան շնորհավորում են, նրա հետ գործարքներ կնքում, միջազգային լայնածավալ միջոցառումների հարթակ է դառնում Բաքուն: Հայ ընթերցողին կարիք կա՞ հիշեցնելու, թե Ալիեւին 2020-ի Արցախյան պատերազմից, Հայաստանի ինքնիշխան տարածքի վրա հարձակումից հետո ո՛վ սիրաշահեց. ո՛վ բարձրացրեց նրա վարկը. 2022-ի ամռանը Բաքվում ԵՄ հանձնաժողովի նախագահ, ազնվական ծագմամբ Ուրսուլա ֆոն դեր Լայենը, ստորագրելով գազային պայմանագիրը, Ադրբեջանի համար ընտրեց «վստահելի գործընկեր» «տիտղոսը», որ հետագայում, ավելի ուշ շրջանառեց ԳԴՀ կանցլեր Շոլցը՝ «աճող» բառն էլ գումարելով:



Նկարը՝ ըստ The Insider-ի

2019-ից պաշտոնավարող 65-ամյա Ուրսուլա ֆոն դեր Լայենը Եվրահանձնաժողովի նախագահի պաշտոնում վերընտրվելու հայտ է ներկայացրել: Կհասցնի՞ այդ պաշտոնը վայելել 2024-ի նոյեմբերից սկսյալ, երբ նույն պահին Բաքուն COP29-ի հյուրընկալության եռուզեռի մեջ լինի, այսօր դժվար է կանխատեսել, քանի որ ֆոն դեր Լայենը ԵՄ դատախազության ուշադրության առանցքում է, որ հետաքննում է Լայենի դեմ՝ «կառավարության գործառույթներին միջամտելու, ապացույցների ոչնչացման, կոռուպցիայի եւ շահերի բախման» հայցը:

### «Միակ եվրոպական կառույցը, որը լրջորեն արձագանքել է Ադրբեջանի դեմ, ԵԽԽՎ-ն է

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը 2024-ի հունվարի 24-ին զրկեց Ադրբեջանին նույն տարվա հավատարմագրից: Ադրբեջանական պետական լրատվամիջոցները ակնարկեցին, որ Ադրբեջանին «այլեւս պետք չէ Եվրոպայի խորհուրդը», գրում է  The Insider-ը:

Գերմանացի սոցիալ-դեմոկրատ, պատգամավոր Ֆրանկ Շվաբեի հաստատակամության, Բաքվի կաշառատվության, սանձարձակ վարքը բացահայտելու եւ պատժելու հանձնառության շնորհիվ ճաք տվեց Ալիեւի շուրջ եվրոպացի, գերմանացի քաղաքական գործիչների վերաշարվող պարիսպը: «Գերմանացի պատգամավորը՝ Ադրբեջանի պետության թշնամի» վերնագրով հոդված էր հրապարակել table.media -ն՝ Շվաբեի մասին մարտի 4-ին, իրազեկելով, թե գերմանական հեռուստատեսության առաջին ալիքը՝ ARD-ն ֆիլմ է ցուցադրելու: (« Ազգի» 7-03-2024-ի համարում տպագրված մեր հոդվածում անդրադարձել ենք « Անդունդի եզրին» ֆիլմին-Ան.Հ.): Վերլուծաբանը նկատել էր տվել, թե «ծառայության ժամանակ դիվանագետները սովորաբար միայն լուրերին են հետեւում, հեռուստատեսային արտադրանքի հանդեպ նվազ է հետաքրքրությունը», սակայն տարբեր է Ադրբեջանի մասին ֆիլմի պարագան: Այն պատմում է 20 տարի պաշտոնավարող Ալիեւի, նրա կեղծած ընտրությունների, ընդդիմադիրներին ազատությունից զրկելու եւ իր համար՝ հատկապես Բրյուսելից եւ Բեռլինից միջազգային ճանաչում գնելու գործարքին:

Ֆիլմի ցուցադրությունից հետո ակնկալվում էր, որ իրազեկման հրաբխի լավան Բունդեսթագի արտահերթ նիստ կգումարի... գոնե: Առայժմ տեսանելի չէ, թե կաբինետներում ինչպես եւ ինչու են լռում նրանք, որ ֆիլմի ցուցադրությունից հետո պիտի հստակ արտահայտվեին: Տեսանելին ֆբ հարթակում է. Ազնիվ է գերմանացի հեռուստադիտողի կարծիքը: Շատերն են երկյուղում, թե այս ամենը իմանալուց հետո, ինչպե՞ս են պահպանելու ժողովրդավարությունը, եվրոպական արժեքները, բարոյականության կորուստը տեսնելով ինչպե՞ս են իրենց քվեն վստահելու կուսակցություններին, քաղաքական գործիչներին՝ առաջիկա ընտրություններում:

Բեռլինը միջնորդ է Հայաստան-Ադրբեջան խաղաղության բանակցություններին: Ձայն չի հանում, երբ նաեւ ի՛ր դիտորդներն են արձանագրում, որ ՀՀ-ի վրա Ադրբեջանը կրակում է, ծպտուն չի հանում, երբ Բաքուն «Ազերթաջի» գերմաներեն տարբերակում առանձնակի հոգատարությամբ տարածում է Արեւմտյան Ադրբեջանի ընկերակցության հորդորը՝ ուղղված ԵՄ-ին, ԱՄՆ-ին, աշխարհին... Չեզոք է, ինչպես ձեւակերպում է ԳԴՀ ԱԳՆ-ն: Սակայն Բաքվում գերմանացի քաղաքական գործիչների անձնական եւ քաղաքական շահերն այնքան սերտորեն են փոխկապակցված,որ Բեռլինին զրկում են չեզոք մնալու՝ թեկուզ շատ մեծ ցանկությունից:

# Շնորհավորում ենք

Հարգելի պարոն **Տիգրան Հարությունյան:** Մեծագույն բավականությամբ եւ գործընկերային ջերմությամբ ընդունեցինք Ձեր հարգարժան անձի կողմից Ռուսաստանի դաշնությունում «Հայերի միության» փոխնախագահի եւ գործադիր տնօրենի պաշտոնական պարտականությունները ստանձնելու լուրը: Հայ Ազգային Ռամկավար կուսակցության կողմից ցանկանում ենք մեր գոհունակությունը եւ ընկերային ջերմ շնորհավորանքներն ուղղել ձեր համեստ անձին: Ի սրտե մաղթում ենք ձեզ ակտիվ եւ նպատակասլաց մեկնարկ նոր աշխատանքում, համարձակ նախաձեռնություններ, վճռականություն, աշխատանքային ներշնչանք: Հույս ունենք, որ ձեր հաջողությունը կծառայի մեր էթնոսի քույրերին եւ եղբայրներին, որոնց համար մայր հայրենիքի հետ կապը անցնում է ձեր ազգանվեր կառույցի միջով:



# Նորին մեծություն աղմուկը

⇨1 Կամ ոսկեղարշին կարող է հանգիստ ապրել՝ ադրբեջանական զինուժի հարեւանությամբ, բայց չէ՞ որ մի անգամ դա եղել է՝ չի ապրել, դրա համար էլ անվտանգային գոտի ենք ունեցել, հիմա դա ուզում եք հանձնե՞լ, որ նույն մշտական վտանգը գլխներիս կախված ապրե՞նք:

Մեր անվտանգային գոտին հանձնող իշխանությանը հայ մարդը կարո՞ղ է իշխանություն համարել:

Կամ ընդհանրապես՝ սահմանազատումն ինչպե՞ս կարող է առանց ողջ սահմանների երկայնքով համաձայնեցված ընդհանուր փաստաթղթի, ինչ-որ մեկի ցանկությամբ մի կետից սկսվել, աշխարհում այդպիսի գեթ մի օրինակ նշեք: Ալմա-Աթիի հռչակագրի տակ Ադրբեջանն երկու տարի ուշ է ստորագրել, բոլորովին այլ քարտեզներով: Եթե երբեւէ Ալմա-Աթիի հռչակագիրը վկայակոչելով ինչ-որ պայմանագիր ստորագրվի՝ դա ուզած պահի Ադրբեջանը կարող է անվավեր հայտարարել, քանի որ իր ստորագրությունը չկրող հռչակագրի ներքո կլինի այդ պայմանագիրը:

Սա ի՞նչ մեծ ֆարս է: Որքանո՞վ են մեր ընդդիմադիր եւ իշխանական էլիտաները մասնակից ֆարսին՝ գիտակցելով, կամ՝ ոչ: Եւ ի՞նչ խնդիր է լուծում այս ֆարսը՝ ժամանակ ե՞ն շահում, ինչ-որ բանի մասին տեղյակ լինելով, աղմուկ եւ ընդդիմախոսություն հրահրելով են ուզում Ադրբեջանին հասկացնե՞լ, որ երկրի ներսում համաձայն չեն տարածք զիջել, կամ միգուցե ուզում են Ադրբեջանի հարձակումը հրահրե՞լ: Կրակի հե՞տ եք խաղում:

Եթե իրոք, ինչպես ընդդիմությունն է պնդում՝ երկրի գործերը շատ վատ են, վերջին աստիճանի վատ, ապա զարմանալի է, որ այդ վերջին աստիճանին համարժեք քայլը չի անում նույն ընդդիմությունը՝ միասնաբար պատգամավորական մանդատները դնելով եւ լրջորեն փորձելով ինչ-որ հակաքայլ անել: Եթե չեն դնում՝ ուրեմն այլ տեղեկատվության են տիրապետում, որը նրանց ստիպում է մեծ ֆարսին մասնակից դառնալ՝ խոսույթի մակարդակով միայն հակադրվելով նույն ստառված, չարչրկված, լկված ձեւաչափով իշխանության հետ միասնաբար. մի կողմը՝ թե բա նախկինում ինքնորոշում ու պետականություն ունեցող Արցախ ունեինք- դուք տվեցիք Արցախը, հիմա էլ Հայաստանի տարածքներն եք տալիս, հողատու եւ դավաճան եք:

Ու իշխանությունն էլ ժանրի կանոններով վերադարձնում է «գդալին», թե՝ չեք բացատրել մարդկանց, ու լավ էլ իմացել եք, որ Արցախի ինքնավարությունը հենց ի սկզբանե Ադրբեջանի կազմում է եղել: Լուծեինք Արցախի հարցը, երբ իշխանություն էիք, հողատուն ու դավաճանն էլ դուք եք:

Ու վերջ չունի անվերջ ձգվող ու անպտուղ այս խոսույթը՝ ամեն անգամ նույն բառերով, զրո օգտակարությամբ... մինչեւ մի նոր անդառնալիություն:

Իշխանության ներկայացուցիչների՝ որպես անվտանգային թեմաներով ընդդիմադիրների խոսակցությանը հակադարձում այն աստիճան հակադիվանագիտական է, այն աստիճան տնավարական բառապաշարով եւ բովանդակությամբ, այն աստիճանի հակասական (մի օր այս ասելով, մյուս օրն այդ ասածը հետ ողորմյա անելով), այն աստիճանի հակառակորդին նորանոր զիջումներ անելու հակվածությամբ, որ մնում ես ընդհանրապես տարակուսած, թե՝ լավ, էս միջին ընդունակությունների տեր մարդկանցով ո՞նց կարելի էր կառավարություն եւ Ազգային ժողով ձեւավորել ու ժողովրդի, հանրության ճակատագիր հանձնել նրանց, մի քանի իրազեկներին հանած:

Աղմուկով մարդկանց զբաղեցնելու տեխնոլոգիան աշխարհի չափ հին է, բայց մերոնք, դյուրահավատ կողմնակիցներ ունենալով, էլի ու էլի, ու անվերջ օգտագործում են դա:Որ մարդիկ մտածելու ժամանակ չունենան, չնկատեն քովիդ-նախարարուհու՝ անցած տարվա բյուջեի կատարողականի թվերի լվացումը՝ թե բա առողջ ծերացման խմբակներ են ստեղծվել, հարյուրավոր կյանքեր են փրկվել այսուայն ծրագրերի ներդրմամբ (իհարկե՝ միլիոնավոր դոլարների ծախսմամբ). լավ, էլի, աչքիս ոսպնյակն իսկի չեմ կարողանում փոխել, ձեր փող լվացող ծրագրերում ո՞վ կտեղավորվի, ի՞նչ «Առողջ եղե՛ք» , ի՞նչ մամոգրաֆիայի շարժական ծրագիր, երբ առողջապահության մեջ ծառայություններն անհասանելի մեծ գումարներ արժեն, օենքներն անտրամաբանական ուղղորդումներ են արել առողջապահական ծառայություններ ստանալու կարգերում, իսկ նախարարությանն ուղղված շատ դիմումներ ավտոմատ մերժվում են՝ առանց մարդու դեմքին նայելու, օնլայն հարաբերվելը գտածո է դարձել նախարարության համար:

Աղմուկը պետք է, որ չնկատեն, թե սոցապ նախարարն ի՞նչ հինգ մլն բնակչության հեռանկարի վրա է ապագա թիրախային ծրագրերի մասին ակնարկ անում՝ ոլորտի անցած տարվա կատարողականը ներկայացնելիս, արդոք արդեն պլանավորում կա՞ հնդիկներով, վերադարձի ցանկություն ունեցող ադրբեջանցիներով մեկ-երկու տարում Հայաստանում հասնել բնակչության թվի հինգ միլիոնանոց թիրախին: Կամ ո՞վ պիտի այս աղմուկին զուգահեռ կատարողականի թվեր լսի, որ տնտեսական վերլուծություններ անի, ինչպես ավելի վաղ տարիների, երբ միջանցքներում լրագրողները եւս քաղաքական միասնական կորպուսի հրահրած աղմուկի մասնակիցն են , այն աղմուկի, որը չի թողնում շատ բան նկատել:

Ըստ էության,ԱԺ վերջին աղմկաշատ քառօրյայի, այնտեղ հնչած մտքերի, վարչապետի տեսական որոնումների, Տավուշից սահմանազատում սկսելու, այդ հարցում Ադրբեջանի հետ այդպես էլ համաձայնությունների բացակայության արձագանք որպես.

Այսպես կոչված՝ պատմական Հայաստանի եւ իրական Հայաստանի հակադրությունն անընդունելի է, դրա վրա նոր փիլիսոփայություն կառուցելը հակագիտական է, սիրողական եւ վնասակար՝ մեր ներկա մարտահրավերների տեսակետից: Այդ մասին խոսելն անգամ վնասակար է՝ եթե անգամ այդպես մտածողներ կան, թող լուռ մտածեն ու գործեն, բայց դա չբարձրաձայնեն, ջուր լցնելով բազմադեմ թշնամու ջրաղացին: Որովհետեւ նոր ենք կորցրել Արցախը, որի համար (ձեր ասելով՝ ոչ մեր հայրենիքի) հազարավոր տղաներ են զոհվել, որովհետեւ պատմական Հայաստանը լրացնում եւ զինում է ներկա Հայաստանին իրավական, պատմական, գենետիկ գործիքներով, մի բան, որ շատ կուզենային ունենալ այլ պետություններ, այդ թվում՝ Թուրքիան եւ Ադրբեջանը, որոնք մինչեւ օրս գողանում են մեր ունեցածը: Իսկ այդ գործիքներն ունեցողները հպարտությամբ ու պրագմատիկ կերպով օգտվում են դրանցից: Մի քանի տարվա ներկա Հայաստանի հակադրումը հինգ հազար տարվա պատմական Հայաստանին, երեսուն տարի հայկական պետություն եղած Արցախին՝ նմանվում է Արարատին նետված մի պստիկ քարի:

Մյուս կողմից՝ եթե նոր փիլիսոփայություն եք առաջարկում՝ նշեք, թե ինչ վերլուծական կենտրոնների, ինչ մասնագիտական կարծիքի վրա եք հիմնվել, ո՞նց կարելի է առանց մասնագիտական ծրագրերի ու մոդելավորման, ռազմավարության մշակման, սիրողական մակարդակով տեսություն առաջարկել: Քանի՞ պատմաբան են այդ տեսության հեղինակների մեջ, ուր եք խցկում մեր ծագումնաբանությունը, ներկայությունն ու ազդեցությունը աշխարհի պատմության մեջ, րոյացնում եք մի բան, որը շատ քոչվոր ժողովուրդների երազանքն է ունենալ եւ օգտագործել:

Արցախի կորստի շուրջ փոխմեղադրանքների առումով. ինչ արդարացում, ինչ պատճառաբանություն էլ բերվի, ինչ պատճառահետեւանքային կապ էլ մատնանշվի՝ Արցախի կորուստը Հայաստանի ներկա ողջ էլիտայի խղճին է, ու նախ՝ իշխանության: Արդարացումները, նախկինում բանակցություններ վարողների, Արցախի իշխանությունների վրա մեղքը բարդելը չի փրկի՝ Արցախը կորցրել է ներկա՛ իշխանությունը, ու վերջ: Եթե անգամ ուրիշներն են մեղավոր՝ նույն իշխանության բացթողումն է, որն ուժ չի ունեցել գործընթացները ձեռքը վերցնել ու տանել դրանք այնպես, որ անդառնալին չկատարվեր գոնե մեկ տարի առաջ, ու թույլ չտրվեր գոնե Արցախի հայաթափումը:

Իհարկե, խորհրդարանական ընդդիմության մի շարք հակադարձումներին դժվար է չհամաձայնել, քանի որ երկրում տեղի ունեցած ամեն բանի համար նախ իշխանությունն է պատասխանատու. բյուջեի կատարողականը կառավարության հնգամյա ծրագրով նախանշումների լրիվ հակառակն է գոնե Արցախի մասով, քանի որ Արցախի կորստով փոխվել են կոնկրետ Արցախի հետ կապված պարտավորությունները, երկրի անվտանգության մարտահրավերներն են ահագնացել: Իսկ որ բյուջեի կատարողականի քննարկումը ավելի շատ վերածվեց արտաքին վտանգների մասին փոխհրաձգության, դա էլ միգուցե նրանից է, որ արտաքին շփումներում հավասարակշիռ մոտեցումներ չեն ձեւավորվել, անհավասարակշռությունը մեծ է:

Բայց սա մեր ողջ հանրության մտահոգությունն է, ոչ թե միայն ընդդիմության մենաշնորհը:

***Հ.Գ.***- *Երբ այս հրապարակումը պատրաստ էր, Ազգային ժողովում դիմակայության պաթոսը գագաթնակետին էր, այնպես էին մինյանց լվանում, որ դժվար էր գրավիչ թամաշայից կտրվել, որում նորից մոտիվը ընդդիմության յուրաքանչյուր ելույթի ավարտին պահանջվող կառավարության հրաժարականն էր, ու դրան նույնանման հակադարձումը իշխանական պատգամավորներից, ընդ որում՝ անգամ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն էր ընդդիմությանը «հաթաթա» տալիս՝ թե « բա խի հրաժարական չեք տալիս», ու դեռ վարչապետն էր եզրափակելու ընդդիմության դասափետումը:*

*Սահմանազատման եւ սահմանագծման վերաբերյալ Ազգային ժողովում ընդդիմության հրավիրած հրատապ քննարկումից հետո, որն իշխանության առաջարկով փակ ռեժիմով էր ընթացել, ընդդիմությունը համանուն հայտարարություն էր դրել շրջանառության մեջ: Երեկ այդ հայտարարությունը դրվեց քվեարկության, որին իշխանական խմբակցությունը դեմ քվեարկեց:*

# Իմաստաբանական բառարան

## Եղանակի տեսության երկակի ստանդարտ

«Երկակի ստանդարտը» քաղաքագիտական ու բարոյագիտական եզրույթ է՝ միջազգային անցուդարձերի ու գործողությունների խտրական մոտեցումները գնահատելու համար:

Տերմինը հայտնվել է 19-րդ դարի կեսերից՝ տղամարդկանց ու կանանց նկատմամբ անհավասար վերաբերմունքի մասին տեսակետ արտահայտելու համար:

Մեր իրականության մեջ «երկակի ստանդարտի» օրինակները բազմաթիվ են. «Մուծվող» եւ «չմուծվող» օլիգարխներին «քաղցր» կամ «թթու» «աչքով» նայելը, բուհերն ու խաղատները մայրաքաղաքից դուրս բերելու առաջնահերթությունը որոշելու հարցում խտրական մոտեցումները, այս կամ այն ներկայացումը բեմադրելու պատճառով տարբեր թատրոններին տրվող կանխակալ գնահատականները, բժշկական կենտրոններում պետպատվերի ու սոցփաթեթի շահառու ճանաչվելու հարցում կողմնակալ որոշումները, պետական պարգեւներ ու պատվավոր կոչումներ շնորհելիս հատուկ «վերաբերմունք» ցուցաբերելու ավանդույթը «երկակի ստանդարտի» դասական օրինակներից ընդամենը մի քանիսն են:

Տարբեր լեզուներում կիրառվող այս եզրույթն անգլերեն *«double standard»* բառակապակցության բառապատճենումն է, որից ունենք գերմաներեն՝ *doppelter standard*, ռուսերեն՝ *двойной стандарт*, թուրքերեն՝ *çifte standart*, իտալերեն՝ *doppio standard* եւ այլն:

Միայն իրանցիներն են հրաժարվել բառապատճենման այս եղանակից, եւ միեւնույն երեւույթի տարբեր գնահատականների մասին խոսելիս, «երկակի ստանդարտի» փոխարեն, հիմք են ընդունել իրանական կենցաղին բնորոշ մի պատմություն՝ կիրառելով «ՆՈՒՅՆ ԵՐԹԻԿՈՒՄ ԵՐԿՈՒ ՏԱՐԲԵՐ ԵՂԱՆԱԿ» *yek bam o do hava* պարսկերեն թեւավոր արտահայտությունը:

Իսկ որտեղի՞ց է գալիս այս թեւավոր խոսքը:

Ոչ վաղ անցյալում, քանի դեռ օդորակիչներն իրանցիների կենցաղում լայն տարածում չէին գտել, ամառային տապ օրերին Թեհրանում ընդունված էր գիշերել տան կտուրների վրա փռած անկողիններում:

Պատմում են, որ մի տարեց կին, մինչեւ անկողին մտնելը, հետաքրքրասիրությունից ելնելով՝ որոշում է այցելել կտուրի մի հատվածում քնել պատրաստվող իր աղջկան ու փեսային, եւ մյուս կողմում՝ արդեն քուն մտած որդուն ու հարսին: Երբ նա հարսին անկողնում նկատում է որդու հետ գրկախառնված, արթնացնում է ու կշտամբում, թե այս զով գիշերով ի՞նչ կարիք կա գրկախառնված քնել: Եւ երբ տարեց կինը կտուրի մյուս հատվածում իր աղջկան ու փեսային տեսնում է, որ իրարից հեռու են պառկած, այս անգամ խորհուրդ է տալիս չմրսելու համար գրկախառնվել: Աղջկան ուղղված այս խորհուրդը լսելով, հարսը դիմում է սկեսուրին ու կտուրի մյուս կողմից արտասանում՝

**Նույն երթիկում, տեր Աստված, երկու տարբեր եղանակ,**
**Մի տեղ շոգ է ահավոր, մի տեղ ցուրտ է խայտառակ:**

«Երկակի ստանդարտի» հայերեն տարբերակը թերեւս կարող էր լինել՝ «**Իմ ոչ ասելը չի նշանակի այո**» թեւավոր դարձած խոսքը:

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

# Գագիկ Թադեւոսյան. Պարաքայլ՝ Արագածոտնից մինչ Կալիֆորնիա

*ԵՐԵՎԱՆ-ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ - Գագիկ Թադեւոսյանը (ծնված 1993-ին, Փարպիում, Արագածոտնի մարզ) 11 տարեկանից պարել է լատինաամերիկյան պարեր, ապա հայկական պարեր է սովորել «Բերդ» համույթի ստուդիայում եւ Հայաստանի ազգային ժողովրդական անսամբլում: 17 տարեկանում դարձել է «Բերդի» մենապարող: Երեւանի Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում ուսանել է բալետ եւ պարադրություն (ավարտել է 2016-ին): Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի թատրոնում հանդես է եկել «Սպարտակ», «Ազնավուր. Լա Բոհեմ», «Զույգ արեգակներ» պարային բեմադրություններում: 2018-ին տեղափոխվել է ԱՄՆ, որպես պարուսույց աշխատել Կալիֆորնիայում գործող «Ժառանգություն» պարի եւ մշակույթի ակադեմիայում: Գագիկը 2019 թվականին Փարիզում կայացած պարի միջազգային առաջնությունում արժանացել է գլխավոր մրցանակի: Նույն թվականից Լոս Անջելեսի «Պետրոսյան» թատրոնի եւ պարի խմբի (հիմնադիր եւ ղեկավար՝ Նարինե Պետրոսյան) մենակատար եւ գլխավոր պարող է:*



**-Սիրելի՛ Գագիկ, գեներդ «պարայի՞ն» են:**

-Նախ՝ շնորհակալ եմ ուշադրության համար: Մեր ընտանիքում պրոֆեսիոնալ պարողներ չկան: Սակայն մայրս դպրոցական տարիներին երկար ժամանակ զբաղվել է պարով, այդ ժամանակվանից էլ նրա մեջ մեծ սեր է առաջացել դեպի պարը, որն էլ այնուհետեւ փոխանցել է ինձ եւ ուղղորդել այս ուղղությամբ՝ սիրել տալով ու արժեւորելով այդ գեղեցիկ արվեստը:

**-Քիչ հայ տղաներ են պարում լատինո պարեր, իսկ դու դեռ մանկուց ես զբաղվել դրանցով: Քեզ չէի՞ն ասում, թե այդ պարերն իբր վայել չեն հայ տղային:**

-Իհարկե, չնայած որ այն ժամանակ կային նման խոսակցություններ, այն էլ՝ գյուղում, բայց զգում էի, որ շատերն են ցանկանում պարել սովորել: Որքան էլ խոսեին, կատակեին, միեւնույն է, բոլորը մեծ հաճույքով, նույնիսկ կարող եմ ասել՝ նախանձով էին նայում, երբ որեւէ միջոցառման ժամանակ պարում էի իմ զույգի հետ, որը զարմուհիս էր՝ հորեղբորս աղջիկը....

**-Ասում են՝ ամեն հաջող արվեստագետ ունի հաջող ուսուցիչ, որին ողջ կյանքում երախտագիտորեն է հիշում: Ո՞ւմ կամ որո՞նց ես դու հիշում:**

-Սկզբում, երբ սովորում էի սպորտային պարեր, ուսուցիչներս սկսնակ երիտասարդներ էին, իսկ երբ սկսեցի ավելի լուրջ զբաղվել պարով, արդեն՝ ժողովրդական, ազգագրական պարախմբում՝ «Արին-բերդ» համույթում, այնտեղ առաջին ուսուցիչս իմ սիրելի վարպետս, լուսահոգի **Բորիս Գեւորգյանն** էր: Նա իմ մեջ ազգագրական եւ ժողովրդական պարերի ամուր հիմքը դրեց, նրան էլ երախտապարտ կմնամ իմ ողջ կյանքում: Հետագայում իմ մեջ դասական պարի զարգացման գործում մեծ ներդրում ունեցան իմ շատ սիրելի, հարգարժան բալետմայստեր **Ռուդոլֆ Խառատյանը** եւ պարուսույց **Հայկ Ավագյանը**:

**-Ինչպիսի՞ն էր զինծառայությունը բեմական պարողի համար:**

-Իհարկե, զինծառայությունը մեծ խոչընդոտ է պարողի հետագա մասնագիտական աճի, զարգացման համար, բայց իմ բանակային օրերն անցել են օպերայում, պարապմունքներին զուգահեռ: Ելնելով երկրի ներկա դրությունից, նաեւ աշխարհագրական դիրքից (այլ բան չեմ ցանկանա ասել), ծառայությունը բանակում անհրաժեշտ է, սակայն եթե ուզում ենք ունենալ լավ արտիստներ, այս խնդիրը կանոնակարգել է պետք: Չնայած որ միշտ անում են բացառություններ լավագույն արտիստների համար:

**-Ես քեզ հիշում եմ Ռուդոլֆ Խառատյանի բեմադրած «Զույգ արեգակներ» բեմադրությունից. հայ բալետի պատմության մեջ բացառիկ մի գործ, որը բազմիցս հեռարձակվել է «Մեցցո» հեռուստաալիքով...**

-«Զույգ արեգակները» հրաշալի բալետային ներկայացում էր, որ մեծ ազդեցություն ունեցավ ինձ՝ որպես բալետի արտիստի կայացման վրա: Շատ լավ օրեր էին, հագեցած պարապմունքներով, փորձերով, աշխարհի տարբեր երկրներից ընտրված արտիստներ, որոնց հետ շփումը եւս մեծ հետք թողեց: Դա մի ներկայացում էր որտեղ պարողն ասես արբագործվում էր, հզոր տիեզերական ուժ կար այդ ներկայացման մեջ: Հիանալի էր, կարոտեցի այդ օրերը: Մեծ աշխատանք կատարեց պարոն Խառատյանը, ինչն, անշուշտ, գնահատելի է:



**-Թե՛ «Ժառանգություն» պարի եւ մշակույթի ակադեմիան, թե՛ «Պետրոսյան» թատրոնի եւ պարի խումբն առավելապես հայկական հանդիսատեսի ունեն: Իսկ համագործակցե՞լ ես ոչ հայկական պարախմբերի հետ:**

-«Ժառանգությունը» մեր դպրոց-ակադեմիան է, որտեղ գրեթե բոլորը հայ երեխաներ են եւ, բնականաբար, հանդիսատեսն էլ մեծամասամբ հայեր են: Իսկ «Պետրոսյան» պարային թատրոնը պրոֆեսիոնալ պարողներից ստեղծված խումբ է, որտեղ պարում են տարբեր ազգության լավագույն արտիստներ: Քանի որ շրջապատված ենք հայ համայնքով, մեր հանդիսատեսն էլ հիմնականում հայեր են, բայց քիչ չեն նաեւ այլազգիները: Ունենք այլ երկրներում շրջագայելու մեծ ծրագիր եւ տարբեր հրավերներ:

**-«Պետրոսյան» խմբի երկացանկում հանդես ես եկել Շառլ Ազնավուրին եւ Ալլա Պուգաչովային նվիրված ներկայացումներում: Կարծում եմ՝ հաճելի փորձառություն էր:**

-Այո՛, խաղացանկում ունենք երեք մեծ ներկայացում՝ Նարինե Պետրոսյանի բեմադրված «Once again Charles Aznavour» («Եվս մեկ անգամ՝ Շառլ Ազնավուր»)՝ նվիրված աշխարհահռչակ ֆրանսահայ շանսոնիեին, «Million red roses» («Միլիոն ալ վարդեր»)՝ նվիրված ռուսական էստրադայի աստղ Ալլա Պուգաչովային եւ «Արամ Խաչատրյան. Masquerade ball» (Դիմակահանդես), որոնց գլխավոր դերերի մենապարողն եմ: Շատ գեղեցիկ, հրաշալի ներկայացումներ են, որտեղ միահյուսված են տարբեր ժանրերի պարային ոճեր՝ հիմնված դասականի վրա:

**-Հետաքրքրական կլինի մանրամասներ իմանալ փարիզյան վերջին մրցույթից, որտեղ դու Գրան պրի ես շահել: Հայաստա՞նն ես ներկայացրել:**

-Փարիզյան մրցույթին մասնակցել եմ որպես հայ արտիստ եւ հայկական պարախմբի պարուսույց, կատարել եմ իմպրովիզ՝ ներկայացնելով Շառլ Ազնավուրի կերպարը, իր իսկ երգի ներքո. ելույթս մեծ ցնծությամբ ու ծափերով ընդունեցին թե՛ հանդիսատեսը եւ թե՛ մասնակիցները, եւ պահանջեցին կրկնել համարը, որով արժանացա Գրան պրիի: Իսկ «Փոքրիկների մրցույթ» բաժնում հաղթեցին մեր դպրոցի սաները՝ նույնպես արժանանալով Գրան պրիի:

**-Կալիֆորնիայի որոշ մասեր մի քիչ հիշեցնում են քո հայրենի Փարպին, ճի՞շտ եմ: Հայաստանի կարոտը մի քիչ առնո՞ւմ ես այստեղ...**

-Այս նահանգն ինձ գրավում է իր ջերմությամբ, ես ամառ շատ եմ սիրում: Այո՛, ինչ-որ ընդհանրություն Հայաստանի բնության հետ, այստեղ հայկական շունչ կա, քարերն էլ են նման, որ հաճախ հիշեցնում են իմ երկիրը իմ գյուղը, իմ բնությունը: Կարոտս առնում եմ իմ սաներից, որոնք հայ են, նրանք մեծ ուժ ու էներգիա են փոխանցում ինձ: Եթե աշխատանքս կապված չլիներ երեխաների հետ, վստահեցնում եմ, որ այստեղ անելիք չէի ունենա...

# «Նոր Իսրայել» նախագիծը՝ Իրանին սահմանակից Արցախում

➩1 Նախկինում Թեհրանին մտահոգում էր Իրանին սահմանակից մեկ այլ տարածքում՝ իրաքյան Քրդստանում «Նոր Իսրայել» նախագծի իրականացման հեռանկարը: Սակայն, այսօր Իրանի համոզմամբ, ավելի իրատեսական է դարձել այդ նախագծի ադրբեջանական տարբերակը:

Այսօր այլեւս Թեհրանը կասկածներ չունի, որ Արցախի գրավումով ու հայերի էթնիկ զտումով, Բաքուն մտադիր է ռազմական գործողություններում Ադրբեջանին օժանդակելու դիմաց, Արցախը վերածել «սիոնիստների» հակաիրանական պլացդարմի:

Իր ենթադրությունները հիմնավորելու համար Թեհրանը փաստեր է ներկայացնում, որ 44-օրյա պատերազմից հետո Իրանին սահմանակից շրջաններում տնտեսական գործունեության անվան տակ, սակայն լրտեսական նպատակներով, ի հայտ են եկել իսրայելական ընկերություններ: Դեռեւս 2023 թվականի ամռանն արդեն խոսվում էր Արցախի «ազատագրված» տարածքներում 12 իսրայելական ընկերությունների գործունեության մասին:

Իրանական աղբյուրները վկայաբերում են Ադրբեջանի էկոնոմիկայի նախարարության հրապարակած տվյալներն այն մասին, որ 2021 թվականի համեմատությամբ Ադրբեջանի ու Իսրայելի միջեւ ապրանքաշրջանառության ծավալներն աճել են 85 տոկոսով: Նույն աղբյուրների համաձայն, վերջին երկու տարիների ընթացքում, գյուղատնտեսության եւ արդյունաբերության տարբեր ճյուղերում ավելի քան 90 իսրայելական ընկերություններ 30 միլիոն դոլարը գերազանցող ներդրումներ են կատարել:

Ըստ հրապարակված պաշտոնական տվյալների, 2023 թվականին Իսրայելը Ադրբեջանի 10 լավագույն առեւտրական գործընկերների շարքում էր դասվում, որոնց առեւտրատնտեսական շրջանառությունը գերազանցել է 1,7 մլրդ դոլարը:

Իրանական կողմի ներկայացրած տվյալների համաձայն, Ադրբեջանն ապահովում է Իսրայելի 30 տոկոս նավթի պահանջարկը, իսկ Իսրայելը համարվում է Ադրբեջանին ռազմական տեխնիկա մատակարարող կարեւորագույն գործընկերներից մեկը:

Ադրբեջանի կառավարությունը, ըստ իրանական աղբյուրների, ավելի քան 2 մլրդ դոլար է հատկացրել Արցախի «ազատագրված» տարածքներում վերականգնողական աշխատանքների համար:

Իրանական աղբյուրները նաեւ հավաստում են, որ Ադրբեջանը ջանք չի խնայում հնարավորինս արագ վերաբնակեցնել Ղարաբաղը, այդ հարցում համագործակցելով նաեւ Իսրայելի հետ: Պաշտոնական Թեհրանը ենթադրում է, որ ռազմական ոլորտում Ադրբեջանի հետ համագործակցության դիմաց Իսրայելը ձգտում է Ղարաբաղի՝ Իրանին սահմանակից շրջաններում հենակետեր ունենալու հնարավորություն ձեռք բերել:

Իրանը հիմնավոր կասկածներ ունի, որ «զանգեզուրյան» միջանցքի հարցը գտնվում է նաեւ Իսրայելի օրակարգում, որի նպատակն է Իրանին զրկել Եվրոպայի հետ հաղորդակցվելու հնարավորություններից:

Փորձագիտական այս տեսակետի կողմնակիցներից է Իրանի իշխող պահպանողական թեւի ակտիվիստ, «կանանչների կուսակցության» հիմնադիր եւ գլխավոր քարտուղար **Հոսեին Քանանի Մողադդամը**, որի կարծիքով, Իրանի հյուսիսային շրջանների աշխարհաքաղաքական փոփոխությունների հարցը ներառված է ո՛չ միայն Ադրբեջանի ու Թուրքիայի, այլ նաեւ Իսրայելի, կամ, ինչպես ակտիվիստն է նշում՝ ՆԱՏՕ-ի օրակարգում:

# Հայերը եւ Մոսկվան. պատմությունը եւ ժամանակակիցները» Գիրքն արժանացել է Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր գնահատանքին եւ Հայրապետական Օրհնությանը

ԳՈՀԱՐ ԲՈՏՈՅԱՆ

**ՌԴ-ում «Ազգ»-ի հատուկ թղթակից**

Մոսկվայում լույս է տեսել Սուրբ Պայծառակերպություն հայկական եկեղեցու եւ տաճարային համալիրի կառուցման 10-ամյակին նվիրված արժեքավոր աշխատություն՝ «Հայերը եւ Մոսկվան. պատմություն եւ ժամանակակիցներ»: Պատկերազարդ, արտաքուստ ակնահաճո եւ մեծ ուշադրությամբ ընթերցվող գրքի հեղինակն է Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ, արվեստի նվիրյալ Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանը, համահեղինակը՝ հրապարակախոս եւ մշակութային գործիչ Խաչատուր Դադայանը: Գիրքը գրված է վիթխարի փաստական նյութերի հիման վրա եւ խոսում է Մոսկվայում հայկական ներկայության մասին՝ հնագույն ժամանակներից մինչեւ մեր օրերը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ նրա ամենամեծ՝ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմի գործունեությանը: Մասնավորապես, միջնադարյան աղբյուրների հիման վրա ցույց է տրվում, որ թեմի հիմնադրման պատմությունը սկսվում է 14-րդ դարից: Հրատարակության մեջ ներկայացված են ինչպես պատմական դեմքեր, այնպես էլ անհատներ, ովքեր աչքի են ընկել Եկեղեցու կյանքում իրենց մասնակցությամբ: Հայրապետական օրհնության իր խոսքում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն նշում է. *«Հայրապետական օրհնությամբ ողջունում ենք «Հայերը եւ Մոսկվան պատմությունը եւ ժամանակակիցները» գրքի հրատարակությունը: Գնահատանքով ենք անդրադառնում, որ Մոսկվայում Սուրբ Պայծառակերպություն հայկական եկեղեցու եւ համալիրի կառուցման 10-ամյակին նվիրված այս ծավալուն ուսումնասիրությունը առանձնահատուկ կերպով լուսաբանում է Ռուսաստանի հետ հայ ժողովրդի կապերի մասին առաջին հիշատակությունները, ռուսահայոց թեմի պատմությունը, հայ-ռուսական հարաբերությունները տնտեսության ոլորտում, ինչպես եւ երկու ժողովուրդների փոխադարձ ռազմական համագործակցությունը տարբեր ժամանակաշրջաններում: Գիրքը ներկայացնում է նաեւ Ռուսաստանի քաղաքական, գիտության, կրթության, մշակույթի եւ բարեգործության ասպարեզներում մեծանուն հայորդիների դերակատարությունը, Լազարյան նշանավոր գերդաստանի մեծ ներդրումը Ռուսաստանի եւ ռուսահայության կյանքում: Սույն վկայությունները փաստում են Ռուսաստանում մեր ժողովրդի հավատավոր զավակների արդյունալի շարունակական գործունեության մասին: Գովելի է, որ գրքի հեղինակները նախանձախնդիր աշխատանք են իրականացրել պատմական իրողությունները վեր հանելու հայկական եւ ռուսական աղբյուրների, ինչպես նաեւ ռուսական արխիվային նյութերի հիման վրա: Նման ծավալով եւ ընդգրկմամբ ուսումնասիրություն կատարված է առաջին անգամ, որով այս գիրքը սկզբնաղբյուրային նշանակություն է ունենալու հետագա ուսումնասիրողների համար: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու բարձր գնահատանքն ենք բերում աշխատության հեղինակներին եւ հրատարակմանը աջակցող բոլոր անձանց: Մաղթում ենք Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանին եւ հոգեւոր դասին, թեմի առաքելությանը լծակից բարեպաշտ ու եկեղեցանվեր հայորդիներին Աստծո օրհնությունը, զորակցությունը եւ երկնառաք բարիքներ: Մեր աղոթքն է, որ Բարձրյալ Տերը խաղաղություն պարգեւի համայն աշխարհին, նորանոր հաջողություններ ու ձեռքբերումներ շնորհի ռուսաստանաբնակ Մեր սիրելի զավակներին, Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմին: Թող Ամենակալն Աստված պահի ու պահպանի մեր երկու ժողովուրդների դարավոր բարեկամությունը Իր Սուրբ Աջի հովանու եւ խնամքի ներքո:*

*Օրհնությամբ՝ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ»*:



Վերջերս՝ մարտի 31-ի առավոտյան, երբ Սուրբ Հարության տոնի առիթով գնացել էի Մոսկվայի Սուրբ Պայծառակերպության հայկական եկեղեցի՝ մասնակցելու տոնական Սուրբ Պատարագին՝ ինչպես Մայր տաճարում, այնպես էլ բակում, եւ անգամ՝ տեղ չլինելու պատճառով եկեղեցու շուրջը հավաքված՝ զարմանքով եւ հիացմունքով հանդիպեցի հազարավոր մոսկվաբնակ հայերի, ովքեր եկել էին թեմակալ առաջնորդ Տ. Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի օրհնությանն արժանանալու:

Շուտով սկսվեց Սուրբ եւ Անմահ Պատարագը: Դրսում հավաքվածների համար այն հնչում էր բարձրախոսով: Պատարագիչն էր Եզրաս սրբազանը, որը շնորհավորեց եկեղեցում հավաքված հայորդիներին Սուրբ Հարության ավետիսով, ապա հորդորեց ամուր եւ անսասան մնալ հավատքի մեջ: Ես մտովի տեղափոխվեցի մեկ տասնամյակ առաջ, այն պատմական օրը, երբ հենց այստեղ՝ Մոսկվայի կենտրոնում, վեհորեն հառնեց Սուրբ Պայծառակերպություն հայկական եկեղեցին եւ մենք լսեցինք նրա զանգերի ախորժելի ղողանջները...

Վեհություն եւ հանդիսավորություն հաղորդող մի եկեղեցի, որ կառուցվել ու կյանքի է կոչվել Տեր Եզրաս արք. Ներսիսյանի գործադրած, բառի բուն իմաստով՝ հերոսական ջանքերի եւ Ռուսաստանում ապրող մեկենասների աջակցությամբ: Այն ազգային-եկեղեցական ճարտարապետական կանոններին հավատարիմ եզակի եւ պարծանքի արժանի կառույց է, եւ ռուսաստանաբնակ հայերս լավ գիտենք, թե ինչպիսի մեծ, աներեւակայելի ճիգ ու ջանք, նվիրում եւ անձնազոհություն է պահանջվել այս ամենին հասնելու համար: Միակ մարդը, որ կարողացավ համախմբել եւ իր շուրջը հավաքել նվիրյալների մի ստվար բանակի՝ իր ապշեցուցիչ ծավալներով ամենամեծ եկեղեցին կառուցելու համար՝ Տ. Եզրաս արք. Ներսիսյանն էր: 2001 թվականից սրբազանի առաջնորդության տարիներից մինչեւ օրս, Ռուսաստանի Դաշնության տարբեր քաղաքներում կառուցվել է շուրջ 80 հայկական եկեղեցի, որոնցից այժմ գործում են 70-ը, իսկ 10-ը դեռ գտնվում են կառուցման փուլում: Իսկ մինչ նշանակումը թեմում գործում էր ընդամենը ութ եկեղեցի:

Մոսկվայի հայկական եկեղեցուն կից արդեն հինգերորդ տարին է գործում է Սուրբ Գրիգոր Նարեկացու անվան վարժարանը: Այստեղ ուսումը համապատասխանում է ՌԴ պետական չափորոշիչներին՝ նախապատրաստականից մինչեւ 11-րդ դասարան: Ուսումը վճարովի է: Սա միակ վարժարանն է Ռուսաստանում, որտեղ երեխաները պարտադիր ուսումնասիրում են հայ ժողովրդի պատմություն եւ մայրենի լեզու:

Թեմի կրթական գործունեությունը տարեցտարի ընդլայնվում է: Գրեթե բոլոր ծուխերում գործում են հայորդյաց տներ, իսկ վերջերս Սանկտ Պետերբուրգում Եզրաս սրբազանի նախաձեռնությամբ բացվեց Սուրբ Գրիգոր Լուսավորչի անունով հոգեւոր ճեմարան, որտեղ ուսումն անվճար է: Ճեմարանն ունի բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակ: Այստեղ կրթվելու են Հայ Եկեղեցու ապագա հոգեւորականները:

4 տարի սովորելուց հետո սաները կարող են ուսումը շարունակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում:

Մոսկվայի եկեղեցական համալիրի տարածքում է գործում նաեւ «Տապան» թանգարանը, որը կոչված է մեկտեղելու մեր բազմադարյա հոգեւոր- ազգային արժեքներն իբրեւ համամարդկային մշակութային գանձարանի հարստություն: Այստեղ ներկայացված են աշխարհահռչակ հայազգի նկարիչների կտավներ, եկեղեցական սրբություններ, մշակութային ու կենցաղային բացառիկ իրեր: Թանգարանը բարեհաջող համագործակցում է Էրմիտաժի, Նովոսիբիրսկի Արվեստի պետական թանգարանի, Մոսկվայի Տրետյակովյան թանգարանի, ինչպես նաեւ մշակութային մի շարք կենտրոնների հետ: Թանգարանը հրաշալի հավաքատեղի է ուսանողների համար՝ ֆիլմեր դիտելու, քննարկումներ անցկացնելու:

Հայապահպանության ուղղված հզոր նախաձեռնություն է «Հայկական խաչ» բարեգործական հիմնադրամի ստեղծումը: Այն արդեն ունի կայք, որի թափանցիկ եւ օգտակար գործունեությունն ամենքի աչքի առաջ է: Եկեղեցու հովանու ներքո ստեղծված հիմնադրամի նպատակը մշակութային, կրթական, առողջապահական, գիտական ոլորտներում մարդկանց աջակցություն ցուցաբերելն է, համախմբելը: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահը ճանաչված բարերար եւ հասարակական գործիչ Սամվել Կարապետյանն է:

Այսօր անասելի ծանր ու դժվարին ժամանակներ են ապրում Հայաստանը, Ռուսաստանը, մեր ամբողջ տարածաշրջանը: Բարդ ու դժվարին ժամանակներ ապրող Ռուսաստանում մեր հայրենակիցները, յուրաքանչյուրն իր բնագավառում, փորձում է անել հնարավորն ու անհնարինը՝ մեր ազգային ինքնությունը անաղարտ պահելու համար: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին Ռուսաստանում նպաստում է հազարավոր հայորդիների համախմբմանը: Հայ լեզուն եւ հավատքը պահպանելու եւ եկող սերունդներին փոխանցելու գործում իր անգնահատելի դերակատարությունն ունի Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմը՝ իր առաջնորդի՝ Տեր Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի գլխավորությամբ: Ասվածի խոսուն վկայություններից մեկն էլ «Հայերը եւ Մոսկվան. պատմությունը եւ ժամանակակիցները» արժեքավոր աշխատությունն է:

## Ժամանակներն ու մենք՝ Կ. Պոլսի «Ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագրի դիտակետից



**Կ.Պոլսում լույս տեսնող «Ժամանակ» օրաթերթը 116 տարեկան է:**

**Այն ոչ միայն Սփյուռքում, այլեւ առհասարակ հայկական աշխարհում հայալեզու միակ պարբերականն է, որ 1908 թվականից անընդմեջ հրատարակվում է, միեւնույն ժամանակ ազգային փոքրամասնությունների շրջանում ամենահին պարբերականներից է:**

**«Ժամանակ» օրաթերթը Սարգիս եւ Միսաք Գոչունյան եղբայրներն են հիմնադրել: Այն սերնդից սերունդ, ժառանգաբար պապից որդուն, հետո թոռանն ու այսպես շարունակ անցնող-պահպանվող պարբերական է, որը արեւմտահայերեն է հրատարակվում՝ դասական ուղղագրությամբ:**

**Գոչունյանների չորրորդ սերունդն է թերթը խմբագրում ու հրատարակում:**

**«116 տարի Թուրքիայում հրատարակվելը չի կարելի բացատրել միայն Գոչունյան տոհմի համառությամբ: Բալկաններից մինչեւ Կովկաս, մինչեւ Եգիպտոս «Ժամանակը» կանոնավոր տարածում ու սպառում է ունեցել: Հետո, աստիճանաբար աշխարհագրությունը փոքրացել է, որովհետեւ այդ տարածքները զրկվել են հայերից: Եվ թերթն աստիճանաբար սկսել է սահմանափակվել Կ. Պոլսով:**

**Լրատվամիջոց լինելով՝ այն ազգային ինքնությունը պահպանելու, հայապահպանության լծակ լինելու առաքելություն է ունեցել: Ընթերցողները հայ իրականության մասին տեղեկություն ստանալուց բացի, նաեւ իրենց մայրենի լեզվի հետ ամենօրյա կապն են պահել: Հայ ընտանիքները ցանկացել են «Ժամանակ» օրաթերթն իրենց օջախներում ունենալ ու փոխանցել սերնդեսերունդ:**

**Ժամանակները փոխվել են, այսօր տպագիր թերթ պահելը բավականին բարդ է: Տպագիր թերթ հիմա առաջվա պես հաճախ չեն կարդում, այն սպառել է իրեն, բայց շարունակում է հասարակական կարծիքի ձեւավորման վրա ազդեցություն ունենալ»,-«Ազգ»-ի հետ զրույցում ասաց «Ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Արա Գոչունյանը:**

**Նրա հետ ծավալուն հարցազրույցն առաջիկայում կներկայացնենք 2 մասով՝ հոդվածով եւ zg.am կայքում տեղադրված տեսանյութերով:**

# Մոսկովյան տնտեսական ֆորումը Ռուսաստանի, Հարավային Կովկասի եւ նոր աշխարհակարգի մասին

ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ

*Քաղաքական վերլուծաբան, Եվրասիական փորձագիտական ակումբի համակարգող, ԵՊՀ Ռուսաստանյան հետազոտությունների կենտրոնի տնօրեն*

**Ապրիլի 1-3 մասնակցեցի Մոսկովյան VIII-րդ միջազգային տնտեսական ֆորումի աշխատանքներին: Այդ համաժողովին մասնակցում էր 1688 մարդ: Հրավիրված էին բանախոսներ եւ զեկուցողներ աշխարհի 15 երկրներից՝ Չինաստանից, Հնդկաստանից, ԱՄԷ-ից, Եգիպտոսից, Իրանից, Վրաստանից, Ադրբեջանից, Ղազախստանից, Ղրղզստանից, Ուզբեկստանից, ինչպես նաեւ Գերմանիայից, Իտալիայից, Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունից, Բրազիլիայից: Հայաստանից հրավիրված էր միայն տողերիս հեղինակը: Այս նշանակալից տնտեսագիտական հասարակական-քաղաքական եւ մշակութային-քաղաքակրթական միջազգային հարթակն իրենից ներկայացնում էր չորս պլենար նիստ, 14 բաժանմունքների աշխատանք, ինչպես նաեւ ակտիվ բանավեճեր եւ քննարկումներ կուլուարներում: Ստորեւ ձեր ուշադրությանն եմ ներկայացնում իմ տպավորությունները ու որոշ քննարկումների արդյունքներ հայ հասարակությանը հետաքրքրող թեմաների վերաբերյալ:**

## Նոր աշխարհակարգին հարիր նոր մտածողություն Ռուսաստանում

Մինչեւ վերջերս Ռուսաստանի տնտեսագիտական եւ աշխարհաքաղաքական քննարկումների գլխավոր հարթակը նշանավոր Գայդարի ֆորումն էր, որտեղ իշխում էր գլոբալիզմի եւ լիբերալիզմի ոգին: Այստեղ էին գնում Ռուսաստանի քաղաքական իշխանության ներկայացուցիչները նոր գաղափարներ ստանալու, դրանցով լիցքավորվելու եւ սեփական դիրքորոշումներն արտահայտելու համար: Հիմա ժամանակները փոխվել են: Ուկրաինական ճգնաժամի սկզբից ի վեր գայդարյան ֆորումի շատ զեկուցողներ եւ փորձագետներ հեռացել են Ռուսաստանից, արտասահմանից քննադատում են Ռուսաստանի դիրքորոշումներն ու այլեւս հետաքրքիր չեն ռուսական էսթաբլիշմենթի համար:

Մոսկովյան միջազգային ֆորումը, որը գոյություն ունի արդեն տասը տարուց ավել, սովորաբար եղել է ռուս հայրենասերների, պահպանողականների, ինչպես նաեւ ձախ հայացքներ դավանող ինտելեկտուալների հավաքատեղի: Այս ֆորումի նախագահն է ռուս արդյունաբերող, հասարակական ու քաղաքական գործիչ, բարեգործ, մեծ ինտելեկտուալ **Կոնստանտին Բաբկինը**: Տեղին է ասել, որ այս կարգի գործիչ մենք հայաստանյան իրականության մեջ չունենք: Նրան հաջողվել է անցած տարիների ընթացքում հյուր դարձնել Ռուսաստանի ճակատագրով շատ մտահոգ բազմաթիվ նշանավոր մտավորականների, հոգեւորականների, կոմունիստ եւ «Արդար Ռուսաստանից» քաղաքական գործիչների: Այստեղ են նաեւ ժամանակակից գիտությունների ամենաառաջադեմ ներկայացուցիչներ, որոնց ելույթները նվիրված էին տեսանելի հեռանկարում ամենատարբեր բնագավառներում Ռուսաստանի ապագային:




Ֆորումում հավաքված ինտելեկտուալների եւ ակտիվիստների ելույթներում այսօրվա Ռուսաստանի վիճակն էր իր ոչ միայն նվաճումներով ու հաջողություններով, այլեւ մեծ խնդիրներով, լուրջ անհանգստության պատճառներով եւ տարբեր բնագավառներում ընթացիկ իրավիճակի խոր վերլուծություններով: Տեղին է նաեւ ասել, որ գայդարյան ֆորումի փակվելուց հետո այս մոսկովյան ֆորումը հավակնում է դառնալ Ռուսաստանի ինտելեկտուալների խոշորագույն հավաքատեղի, որին սկսելու է շատ ավելի ուշադիր եւ բծախնդիր հետեւել ռուսաստանյան քաղաքական իշխանությունը: Թույլ ենք տալիս մեզ կանխատեսել, որ հաջորդ, IX-րդ տնտեսական ֆորումի հյուրն են լինելու նաեւ Ռուսաստանի քաղաքական վերնախավի առաջին դեմքերը:

Այս միջոցառմանը մասնակցող բազմաթիվ լրագրողների (իրականում ներկա չէին գլխավոր ռուսական հեռուստաալիքները, բայց գլխավոր տեղեկատվական հովանավորը ՌԲԿ ալիքն էր) հետաքրքրում էր, թե ինչ լուծումներ են առաջարկում հրավիրված զեկուցողները Ռուսաստանի արագանցիկ զարգացումն ապահովելու համար: Հարկ է նշել, որ շատ քննարկվող թեմաներից մեկը Ռուսաստանի տնտեսական զարգացումն է եւ ցանկությունը 2030թ.-ին դառնալ աշխարհի 4-րդ տնտեսությունը՝ Ճապոնիայից եւ Գերմանիայից առաջ (համախառն ներքին արդյունքի ցուցանիշով):

Շատ մտահոգիչ թեմաներից էին օրինակ ռուս բնակչության թվի նվազեցումը եւ այլ ազգությունների թվի աճը, որը հանգեցնում է ապաբնակեցման: Միգրացիայի խնդիրները սկսում են հուզել քաղաքական շրջանակներին, որովհետեւ սպառնում են փոխել ժամանակակից Ռուսաստանի դեմքը: Եվրասիական տնտեսական ինտեգրումը իր գոյության տասը տարում բերում է ինչպես պատկառելի հաջողություններ, այնպես էլ նոր խնդիրներ: Ռուսաստանյան ժամանակակից հասարակության մեջ աղոտ եւ անորոշ է ԵԱՏՄ-ում ծավալվող ինտեգրացիոն գործընթացի ապագան եւ դրա մասին պատկերացումները հասարակ քաղաքացիների շրջանում: Ակնհայտ է, որ ժամանակակից աշխարհակարգը ոչ միայն փոխվում է, այլեւ արդեն փոխվել է: Ռուսաստանի տարածքը գերիշխող դիրք ունի ժամանակակից Եվրասիայում, որտեղ տնտեսական զարգացման կենտրոնը տեղափոխվում է Արեւմուտքից Արեւելք: Չինաստանի, Հնդկաստանի, Բրազիլիայի եւ այլ երկրների պատկառելի ներկայացուցիչներ չեն վախենում խոսել աշխարհում գլոբալ կենտրոնի թուլացման եւ բազմակենտրոն աշխարհի ձեւավորման մասին: Արտասահմանյան կարեւոր զեկուցողների ներկայությունը ֆորմալ առումով պետության կողմից չհովանավորվող այս միջազգային ֆորումի բեմերում խոսում էր այն մասին, որ մեծ է հետաքրքրությունը Ռուսաստանի հետ արտոնյալ պայմաններում տնտեսական համագործակցություն ծավալելու եւ դրանից շատ շոշափելի ու բացատրելի օգուտներ ունենալու նպատակով:

Ելույթների տրամադրությունից եւ միջանցքներում մտքերի փոխանակությունից պարզ է դառնում, որ շատ դժվար է կանխատեսել, թե երբ կավարտվի Ուկրաինական ճգնաժամը: Բայց նույնիսկ Արեւմուտք-Ռուսաստան գլոբալ առճակատման պայմաններում զեկուցողների շրջանում նշանավոր գերմանացի եւ իտալացի ունենալու հանգամանքը խոսում էր Ռուսաստանի աճող հնարավորությունների հանդեպ նրանց ունեցած անթաքույց հետաքրքրության մասին:

Եվ վերջապես: Մեզ հարկավոր է ուշադրությամբ հետեւել հասարակական բուռն քննարկումների արդյունքում ակնհայտորեն փոխվող Ռուսաստանի իրավիճակին: Այստեղ պատրաստվում են խորացնել բարձր տեխնոլոգիաների տիրապետումը Չինաստանի, Հնդկաստանի, Իրանի եւ էլի մի քանի երկրների հետ համագործակցության արդյունքում: Մենք Հայաստանում պարտավոր ենք իմանալ, որ մեր հարեւան Իրանը 2023թ. տվյալներով մտել է աշխարհի տեխնոլոգիապես ամենազարգացած տասը երկրների շարքը: Այստեղ չեն թաքցնում, որ ակնկալում են էական օգուտներ Ռուսաստանի հետ ոչ միայն տնտեսական, այլեւ գիտական ու քաղաքակրթական ոլորտներում համագործակցությունը մեծացնելուց:

Ռուսաստանի բարձր տեխնոլոգիաների ամենանշանավոր գիտնականները որոշել էին լայնորեն ներկայանալ այս համաժողովում եւ ներկաներին մանրամասնորեն բացատրել արհեստական ինտելեկտի զարգացման պայմաններում սպասելիքները տեխնոլոգիաներից եւ սպասելիքները ապագա մարդուց (թե ո՞ր ոլորտներում է մարդը լինելու անգերազանցելի եւ անփոխարինելի): Ընդհանուր առմամբ ֆորումը առաջ էր տանում Եվրասիական Մեծ գործընկերության թեզը, որն ինչպես հայտնի է, սկսել է ակտիվորեն շրջանառվել Ռուսաստանի նախագահ Վ.Պուտինի, Չինաստանի նախագահ Ս.Ցզինպինի եւ Հնդկաստանի վարչապետ Ն.Մոդիի կողմից: Այս հարթակներում մոտակա տարիներին իշխելու է Մեծ Եվրասիայում տնտեսական առաջանցիկ զարգացման պայմաններում միջքաղաքակրթական երկխոսությունը խթանելու տեսլականը:

## Տրանսպորտային լոգիստիկ միջանցքների խնդիրը Եվրասիայում եւ Հարավային Կովկասը

Տողերիս հեղինակը հնարավորություն ունեցավ զեկուցելու այս ոլորտում Հարավային Կովկասի տեսանելի հեռանկարի մասին: Հասկանալի է, որ Հայաստանի վարչապետի կողմից ձեւակերպված «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությունը արդյունք է մեր տարածաշրջանում արդեն իսկ ծավալվող աննախադեպ գործընթացների: Տարածաշրջանի խոշոր տերությունների՝ Ռուսաստանի, Թուրքիայի եւ Իրանի կողմից պաշտպանվող տրանսպորտային բոլոր ուղիների վերաբացման ծրագիրը պարզորեն ցույց է տալիս, որ հայ-ադրբեջանական բանակցությունները հարաբերությունների կարգավորման եւ միմյանց ճանաչման ուղղությամբ տեսանելի հեռանկարում կավարտվեն: Դրանից հետո շատ արագ տրամաբանական ավարտին կհասցվեն հայ-թուրքական բանակցությունները: Վերին Լարսի անցակետը (որը միացնում է Վրաստանն ու Ռուսաստանը) իր հզորությամբ գերազանցում է նույնիսկ խոշոր նավահանգիստների աշխատանքին: Շատ ինտենսիվ են աշխատում ոչ միայն Իրան-Ադրբեջան-Ռուսաստան տրանսպորտային անցումները, այլեւ Հայաստան-Վրաստան-Ռուսաստան եւ նավահանգիստներ-Վրաստան-Ռուսաստան անցումները: Հարեւան Վրաստանը խոչընդոտներ չի դնում այս աննախադեպ ապրանքային ծավալների տեղափոխության հարցում: Հետաքրքրական է, որ Նորվեգիայից մինչեւ Սեւ ծով ռազմական թատերաբեմ հիշեցնող սահմանների փակման պայմաններում Հյուսիս-Հարավ միջանցքը գործում է ոչ միայն Իրանը Ռուսաստանին կապող բեռնափոխադրումների համար, այլ նաեւ մեզանով են անցնում աշխարհի տարբեր մասերից Թուրքիայով Ռուսաստան տեղափոխվող բեռները: 2023թ. տվյալները ցույց են տվել, որ աննախադեպ աճում են վերաարտահանման ծավալները ԵԱՏՄ անդամ Հայաստանի տարածքով եւ Հայաստանը աննախադեպ օգուտներ ունի այս գործընթացից: Քանի որ ոչ ոք չի կարող ասել, թե երբ կավարտվի Ուկրաինական ճգնաժամը եւ երբ կսկսվեն Արեւմուտք-Ռուսաստան բանակցությունները հարաբերությունները նորմալացնելու ուղղությամբ, վստահորեն կարելի է ասել, որ Հայաստանը որպես ԵԱՏՄ անդամ նորանոր օգուտներ է ստանալու այս համագործակցությունից: Բայց ավելի կարեւոր է այն, որ Հարավային Կովկասի տրանսպորտային-լոգիստիկ հնարավորությունների եւ տեսանելի հեռանկարում դրանց տնտեսական եւ աշխարհաքաղաքական նշանակության վերաբերյալ ի՞նչ են մտածում աշխարհի մյուս մասերի ինտելեկտուալները:

Իրանցի զեկուցողը համոզված էր, որ Հարավային Կովկասի տրանսպորտային նշանակությունը մոտակա տարիներին անկասելիորեն աճելու է: Իտալացի մասնակիցը համոզված ասում էր, որ անկախ այն բանից, թե Եվրոպան ինչպես է վերաբերվում ժամանակակից Ռուսաստանին, անվիճելի է, որ Հյուսիս-Հարավ միջազգային տրանսպորտային միջանցքի դերը տեսանելի հեռանկարում միայն աճելու է: Ընդ որում աճելու է այնպես, որ գրավելու է ոչ միայն Եվրասիայի երկրների, այլեւ օվկիանոսներով առեւտուր անող աշխարհի մնացած մասերի բիզնեսի համար:

⇨7

# Աշխատանք. դա ի՞նչ է

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

Հոմանիշների բառարաններում աշխատանք բառի դիմաց գրված է՝ վաստակ, զբաղմունք, գործ... Ընդամենը չորս տարի առաջ ՀՀ բարձր մակարդակներում սրանց ավելացավ՝ պարգեւատրում հասկացությունը, երբ տնտեսական քաղաքականության կուրս հռչակվեց աշխատանքը դրամական տեսքով խրախուսելը: Թե ինչքանով էր արդարացված այն սեփական թիմից սկսելը, որը դրսեւորվեց նախարարների, տեղակալների, կառավարությանը կից կոմիտեների, ծառայությունների, գործակալությունների, վարչությունների, այլ ստորաբաժանումների պաշտոնյաների ամսվա վաստակը մինչեւ 1.500.000 դրամի հասցնելը, հանրության մի զգալի հատվածն այն որոշակի վերապահումով ընդունեց; Արդեն իսկ պարզ էր, որ ժողովրդին ծառայելու խոստումներով իշխանության եկածները կարող էին բավարարվել ՀՀ-ում ընդունելի՝ ասենք մինչեւ չորս հարյուր հազար դրամի դիմաց ստորագրելով, որպիսի տեղեկատվություն հաճախ է հայտնվում համաշխարհային մամուլում: Իսկ ահա հայաստանյան միջավայրում, եթե 1.5 մլն դրամ ստացողի կողքին կա նաեւ երկրորդ բարձր վարձատրվողը, կարելի է մինչեւ ամենաթողության տրամադրության տրվել. և՛ երկրորդ բնակարանը գնել, և՛ երրորդ ավտոմեքենան, և՛ ամռանը արտերկիր հանգստանալու մեկնել, և՛ ձմռանը, նաեւ՝ ընտանիքի անդամների արտասահմանյան ուսումնական հաստատություններում ուսանելու վճարները փակել, մի խոսքով՝ շռնդալից միջավայր:

Որ այս ամենը ներկայացվում է բարձր վաստակ ունենալու շղարշի տակ, որն ուղեկցվում է դեմից դեմք տարօրինակ քրեական բացահայտումներով, սա՛ է ՀՀ իրական միջավայրն ու պատկերը. ինչ-ինչ աճի ցուցանիշների պարագայում հարյուր հազարավոր այլոց մոտ անգամ նվազագույն դրական փոփոխություններ չեն արձանագրվում, ինչպիսի իրողությունը տեղ է գտնում հենց իշխանության տարբեր թեւերի հաշվետվություններում:

Այս ֆոնին ՀՀ վարչապետը հայտարարում է, որ ինքը աղքատությունը հաղթահարելու այլ ձեւ ու միջոց չգիտի, քան է՝ աշխատանքը: Ավաղ, չի ասում, թե որքան է իր կառավարությունում սիզիփոսյան աշխատանքը, որտեղ վերջին շաբաթներին նվազագույնը երկու նախարարներ փոխվեցին, մեկը՝ սուս ու փուս, մյուսն այնպիսի աղմուկով, որ հանրությունը երկար տարիներ չէր տեսել, քանզի կապված էր նաեւ տեղակալի ու 5-6 աշխատակիցների ինչ-ինչ ֆինանսական գործարքների հետ:



Մեր պատմության համայնավար շրջանում հետեւյալ կարգախոսը կար՝ աշխատանքը գեղեցկացնում է մարդուն: Լավից-վատից աշխատում էին, դժգոհելով բնակարան էին ստանում, արձակուրդ մեկնում, անաշխատունակության թերթիկ ներկայացնում, սոցերկրներ ուղեւորվում, քանզի, ասում էին, քարից հաց քամող մարդիկ են, ասել է թե՝ աշխատողներ, հերոսներ: Հիմա, պարզվում է, վերջիններս հարկ վճարողներն են, եթե իհարկե աշխատանք ունեն: Այնքանով-որքանով մեր մեկ միլիոն գյուղաբնակների խոսույթում հիմնական արտահայտությունը *աշխատանք չկա-* ն է, նրանց հերոսների ցանկից ջնջել են, ասենք՝ հանել են: Նրանք էլ յուրօրինակ կողի են ընկել ու նախորդ իշխանություններից որպես պարգեւ ստացած բարեբեր հողերում մեզ անհրաժեշտ հացի ու շաքարավազի հումք ցորենն ու ճակնդեղը չեն աճեցնում: Դե հիմա դուք տեսեք, ասում են իշխանություններն ու լուծարում գյուղաբնակների խնդիրները լուծելու կոչված գյուղատնտեսության նախարարությունը: Դե, Սինգապուրն էլ չունի, ի՞նչ է եղել որ: Այն է եղել, որ այդ հողազուրկ քաղաք-պետությունը տարեկան նվազագույնը 120 հազար տոննա հավի միս է արտադրում, երբ ՀՀ ցուցանիշը հազիվ 12 հազար տոննա է, ներկրվողը՝ 20-25 հազար տոննա, տեղում արտադրվածի կրկնապատիկը:

Թերեւս նման մոտեցմամբ աշխատանք կազմակերպվեց, ասենք, ՀՀ մշակույթի նախարարությունը վերացնելու ուղղությամբ: Դե դեպի Եվրոպա կուրս ենք ընտրել, հայերս եվրոպական արժեհամակարգի կրողներ ենք, նոր գործ է պետք ծավալել: Խնդրեմ ծանոթացեք հայկական հեռուստաալիքներով սփռվող երգերից մեկի հետեւյալ կրկներգին.

**Մեր այգում քեֆ չի լինի,**
**Յարս պարել չգիտի:**

Ոչի՞նչ, որ ընկերուհու յարն էլ պարել չգիտի: Փոխարենը պատկերացրեք ինչ է կատարվում այգում, երբ այնտեղ հայտնվում է 1.000.000 դրամ ամսագումար ստացող փառապանծ իրավական համակարգի ներկայացուցիչ յար-փեսացուն: Կարեւորը խորովածի շշերով պարն է, իսկ գոյականներն ու նրանց գործընկերները կհամբերեն, կդիմանան, կամ էլ՝ իրենց գործը օվկիանոսից այն կողմում կշարունակեն, ուր Արցախ ցուցանակով փողոց կա ու յան-ով ավարտվող քաղաքապետ: Շախմատիստի համար աշխատանքային գործիք համարվող համակարգիչ գնելուց հրաժարվելուց հետո ՀՀ դրոշի տակ հանդես գալուց հրաժարվեց մեր առաջատարը, նույնանման ինչ-որ բան կատարվեց ֆուտբոլի հավաքականի ավագի պարագայում... դե, սպորտի նախարարություն ունենալը որն է: Իսկ ահա պարզվում է, որ Ավստրիայում պաշտպանության ու սպորտի նախարարությունները գործում են նույն կառույցում, լրացնում մեկը մյուսին. բա-ա-ա:

Աշխատա՞նք. մեր օրերում դա ի՞նչ է:

# Երեւանի տրանսպորտի նոր սակագին. դուբլ երկու

Տարին սկսվեց կայանատեղիի վարձավճարի բարձրացմամբ ու ավարտվելու է հասարակական տրանսպորտի թանկացմամբ:

Որոշ ժամանակ առաջ մեծ աղմուկ հանած տրանսպորտի թանկացման հարցը պատճառ դարձավ, որ օրինագիծը չընդունվի: Հայտարարվեց, որ օրինագիծը կվերանայվի եւ նորովի կներկայացվի հասարակությանը: Այդպես էլ եղավ.

«Սիրելի՛ երեւանցիներ, հարգելի՛ գործընկերներ: Միասնական տոմսային համակարգի լրամշակված նախագծով, որը կքննարկվի ավագանու առաջիկա նիստում, նախատեսվում է՝ 30 օրվա համար 8800 դրամ, 90 օրվա համար 23600 դրամ, 365 օրվա համար 88000 դրամ՝ անսահմանափակ երթեւեկելու հնարավորությամբ»,- իր ֆեյսբուքյան էջում գրել է Երեւանի քաղաքապետարանի խոսնակ **Հայկ Կոստանյանը** եւ ավելացրել, որ ուսանողների, բնակչության սոցիալական կամ հատուկ խմբերի համար կկիրառվեն զեղչեր:

Տրանսպորտի մասին նոր նախագծում գների իջեցում նախորդի համեմատ եւ անսահմանափակ երթեւեկություն է խոստանում Երեւանի քաղաքապետարանը:

«Ժամանակին ներկաներն էին պայքարում տրանսպորտի թանկացման դեմ, իսկ հիմա իրենք են ձեռնամուխ եղել թանկացման ոչ թե 50 դրամով, այլ 200 դրամով: Էս օրենքը, որ վերջնական ընդունեն, ավելի լավ է մեքենա գնեմ կամ էլ տաքսիով տեղից տեղ գնամ: Գոնե գիտեմ մեջքիս վրա երկուսից երեք հոգի չեմ տանում»,- մեզ հետ զրույցում ասում է 39-ամյա **Կարապետը**:

Մինչեւ ուղեվարձի թանկացումը Երեւանի քաղաքապետարանը պետք է ձեռնամուխ լիներ ավտոբուսի կանգառները վերականգնելու ու կահավորելու աշխատանքներին: Այսինքն լինի գին-որակ հարաբերակցությունը: Բարեփոխումների իրականացման արդյունքում պետք է նաեւ հստակեցվի, որտեղ են կանգառները, կանգառներում լինեն ցուցատախտակներ, որտեղ կնշվի, թե ե՞րբ է մոտենալու տրանսպորտը, ո՞ր համարի հասարակական տրանսպորտն է երթեւեկում:

«Իրար վրա խցկված մարդիկ երթեւեկում են քիչ է, մի հատ էլ տրանսպորտի գին են թանկացնում: Առանց այդ էլ մեր ժողովուրդը հազիվ ապրում է, օրվա հաց վաստակելով: Ինչու են համեմատվում Եվրոպայի հետ, երբ մենք դեռ չենք հասել նրանց սոցիալական ապահովության եւ զարգացվածության ամենաներքեւի մակարդակին: Նախկինների դեմ ժամանակին պայքարողները շարունակում են նրանց գործը»,-ասում է 64-ամյա **Սուսաննան**:

Մեզ հետ զրույցում 29-ամյա **Աննան**, որը հասարակական տրանսպորտից օգտվում է ոչ հաճախ, հեգնանքով նշում է, որ. «Շատ լավ է, ինտեգրվում ենք Եվրոպային: Ցավոք՝ աշխատավարձերը, կենսաթոշակն ու ծիծաղ առաջացնող կրթաթոշակները մնում են դեռ խուլ ու հետամնաց կովկասյան ստանդարտերի վրա:

Երբ համեմատում ենք հարեւան Թբիլիսիի հետ, ապա նկատում ենք, որ նրանց նստելավարձը բավականին ադեկվատ է ծառայության որակին, եւ բացի այն, որ տարվա կտրվածքով է մատչելի, նաեւ փաթեթում ներառված է մետրոն, իսկ 90 րոպեի ընթացքում կարող ես ավտոբուսը փոխել՝ անվճար»:

Երբ չկա համակարգային մոտեցում, ապա կարող ենք սպասել դուբլ երեքին էլ, չորսին էլ:

ՀԱՍՄԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ

# Մոսկովյան տնտեսական ֆորումը Ռուսաստանի, Հարավային Կովկասի եւ նոր աշխարհակարգի մասին

⇨6 Վրացի բանախոսը մեկ այլ բաժանմունքում վերլուծում էր Հարավային Կովկասի երկրների անվտանգության եւ կայունության փաստարկները եւ մի յուրօրինակ վարկանիշ սահմանելով ըստ անվտանգության ամրության, դասակարգում էր մեր երեք երկրները: Նրա համոզմամբ, ամենաբարձր անվտանգության երաշխիքն ունի Թուրքիայի հետ ինտեգրվող Ադրբեջանը: Երկրորդ տեղում Վրաստանն է, եւ միայն երրորդ տեղում մեր Հայաստանը, որն անվտանգային առումով խոցելի ու հարցեր առաջացնող տեղ ունի:

Ընդհանրապես, մի քանի բաժանմունքներում հարցերի քննարկումներից կարելի էր եզրակացնել, որ տարբեր երկրներ ներկայացնող ինտելեկտուալները հասկանում են, որ աշխարհն արդեն գնացել է ռեգիոնալացման ճանապարհով, եւ անվտանգ են այն երկրները, որոնք ներդաշնակ կերպով տեղավորված են տարածաշրջանային համագործակցության մեջ: Իմ բազմաթիվ զրուցակիցներ համաձայնել են այն գաղափարին, որ «3+3» խորհրդատվական հարթակը Հարավային Կովկասի համար կարող է լրացուցիչ երաշխիքներ տրամադրել ձեւաչափի մասնակիցներին, այդ թվում Հայաստանին:

Մի առանձին թեմա է այն, թե ինչպես է Հայաստանը փորձելու ամրապնդել իր անվտանգության երաշխիքները եւ նվազեցնել իր ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության հանդեպ սպառնալիքները: Սրա մասին հայ հասարակությունում վեճերի պակաս չկա: Բայց խիստ պակաս կա այն հարցում, թե ինչ որակի եւ ինչ մասնագիտական պատրաստվածության արդյունք են այդ քննարկումները եւ Հայաստանի «քաղաքական վերեւներին» առաջ մղելու համար առաջարկվող որոշումները:

Եվ վերջում: Ֆորումում զարմանք առաջացրեց իմ հրապարակային առաջարկը բազմազգ գիտական կոլետիվ ստեղծել Հարավային Կովկասով անցնող Արեւմուտք-Արեւելք եւ Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքների տնտեսագիտական արդյունավետությունը ժամանակակից մաթեմատիկա-տնտեսագիտական մեթոդներով հաշվարկելու նպատակով: Եվրասիական տնտնեսական հանձնաժողովի անդամ-նախարար **Ա.Կոժոշեւը** անմիջապես արձագանքեց, ասելով, որ գաղափարը կփոխանցի ԵՏՀ-ի կոլեգիային եւ կփորձեն նրա հովանու տակ նման կոլեկտիվ ձեւավորել: Չորրորդ բաժանմունքում, որտեղ ես ելույթ էի ունենում, իրանցի զեկուցողը եւս հայտնեց պատրաստակամություն իր երկրի ներկայացուցչին նման կոլեկտիվ գործուղելու համար:

Եվ վերջապես, Մոսկովյան ֆորումի կազմկոմիտեում ասացին, որ 2024, 2025թթ. լրջորեն կմտածեն մի լրացուցիչ քննարկում-համաժողով անցկացնելու վերաբերյալ, որը կլրացնի գիտելիքի այդ զարմանալի բացը եւ կուղղորդի խոշոր բիզնեսին օգտվելու Հարավային Կովկասի, մասնավորապես Հայաստանի առաջարկած զարգացող տրանսպորտային հնարավորութուններից:

# «Ցեղասպանության իրազեկման շաբաթ» Արիզոնայի պետհամալսարանում

Շարունակելով անցյալ տարվա նախաձեռնությունը, այս տարվա ապրիլի 15-19-ը Կանադայում գործող Զորյան ինստիտուտը (Տորոնտո) Արիզոնայի (Մ. Նահանգներ) պետհամալսարանում Ռոզինբլաթ ընտանիքի բարեգործական հիմնադրամի հովանավորության ներքո անցկացնելու է Ցեղասպանության իրազեկման շաբաթ, որի ընթացքում տեղի են ունենալու դասախոսությունների շարք, ցուցահանդեսներ եւ անհատական ելույթներ վերապրողների, քաղաքագետների եւ հետազոտող մասնագետների կողմից: Նրանք անդրադառնալու են ներկայիս աշխարհին սպառնացող վայրագություններին եւ ցեղասպանական արարքներին դիմակայելու հարցերին, չմոռանալով հարգանքի պատշաճ տուրք մատուցելու անցյալի նահատակներին:




Առաջիկա հինգշաբթի օրը կազմակերպվելու են երկու քննարկումներ, որոնցից առաջինը, համադրող դոկտ. **Բարլոու Տեր-Մկրտիչյանի** ղեկավարությամբ, նվիրված է լինելու «Հավաքական եւ պետական վայրագությունները Թուրքիայում» խորագրով գրքին, որը խորամուխ է լինում Թուրքիայում ազգայնամոլության ձեւավորման եւ փոքրամասնությունների (ալեւիների, հայերի, հույների, հրեաների, քրդերի, եզիդիների, եւայլն) նկատմամբ նրանց վերաբերմունքի խնդիրներին, որպես «ներքին թշնամիների»: Քննարկմանը մասնակցելու են գրքի 16 հեղինակներից երեքը՝ դոկտ. **Այշենուր Կորքմազը** (Նիդեռլանդների առաջավոր Ուսումնասիրությունների ինստիտուտից, NIAS), դոկտ. **Դեյվիդ Գաունտը** (Կալգարի համալսարանից) եւ դոկտ. **Համիտ Բոզարսլանը** (հասարակագիտական առարկաների բարձրագույն ուսումնասիրությունների վարժարանից, EHESS):

«Բնաջնջում եւ վերակենդանացում բնիկ լեզուների եւ մշակույթի» վերնագրով համեմատական վերլուծությունների երկրորդ քննարկմանը (համադրող **Կարին Ջարրաթ Սնայդերի** ղեկավարությամբ) մասնակցելու են **Լորենա Ֆոնտեյնը** (Ուինեպեկի համալսարանից), **Լորի Խաչատուրյանը** (Կոռնել համալսարանից) եւ **Թալար Շահինյանը** (Իրվին համալսարանից): Նրանք քննարկում են փոքրամասնությունների իրավազրկման խնդիրները Կանադայում, Մ. Նահանգներում, Արեւմտյան Հայաստանում եւ Արցախի Հանրապետությունում:

Բացի այս զույգ գիտաժողովներից, Զորյան ինստիտուտը շարունակում է իր առաքելությունը միջնակարգ դպրոցների 10-12 դասարաններում «Հավասարություն, հանդուրժողականություն, հաշտեցում եւ իրազեկում» ցեղասպանագիտական կրթական ծրագրի միջոցով: Ծրագրի վարիչն է Զորյան ինստիտուտի վարչական մարմնի փոխնախագահ պրոֆ. **Ալեքս Ալվարեսը**:

Պատրաստեց՝ Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Armenian Mirror-Spectator)

# Բարոնուհի Քերոլայն Քոքսը՝ «Թեքեյան» կենտրոնում



«Թեքեյան» կենտրոն էին այցելել Մեծ Բրիտանիայի խորհրդարանի Լորդերի պալատի անդամ, բարոնուհի **Քերոլայն Քոքսը** եւ ˝HART˝ բարեգործական ընկերության ներկայացուցիչները:

Այցի ընթացքում նրանք հանդիպում ունեցան «Թեքեյան կենտրոն» հիմնադրամի աշխատակազմի եւ հոգաբարձուների խորհրդի անդամներ **Բագրատ Նազարյանի** եւ **Ռուբեն Միրզախանյանի** հետ, ծանոթացան կառույցի գործունեությանը, իրականացվող ծրագրերին:

Մասնավորապես, անդրադարձ կատարվեց Արցախում իրականացված մշակութային, կրթական եւ սոցիալական ծրագրերին:

Այդ ծրագրերի մեծ մասն այսօր էլ շարունակվում է Հայաստանում՝ մշակութային միջոցառումների, սոցիալական աջակցությունների կազմակերպմամբ:

«Թեքեյան կենտրոն» հիմնադրամի տնօրեն **Արմեն Ծուլիկյանն** ու խորհրդի անդամները շնորհակալություն հայտնեցին Քերոլայն Քոքսին՝ տասնամյակներ շարունակ հայ ժողովրդի կողքին լինելու, մարդասիրական աջակցություն ցուցաբերելու համար:

Արմեն Ծուլիկյանը Քերոլայն Քոքսին հանձնեց Թեքեյան կենտրոնի հուշամեդալ եւ պատվոգիր:

Հայաստանի Թեքեյան մշակութային միության նախագահ Ռուբեն Միրզախանյանը բարոնուհի Քերոլայն Քոքսին հանձնեց ՀԹՄՄ պատվո-հուշատախտակ՝ հայ ժողովրդի հարգարժան եւ անսասան աջակցին՝ խորին երախտագիտությամբ եւ հիացմունքով:

Քերոլայն Քոքսը շնորհակալություն հայտնեց գնահատանքի համար եւ վստահեցրեց՝ պատվո-հուշատախտակը կարեւոր ու մշտական տեղը կունենա իր սրտում եւ գրասենյակում:

Հայաստանի Թեքեյան մշակութային միության լրատվական կենտրոն
Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

# Օրակարգում՝ բնապահպանական հարցերն են եւ ծառերի փոխանակման խնդիրները

Սույն թվականի ապրիլի 5-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի կենսաբազմազանության եւ կենսանվտանգության պրոբլեմային խորհրդի նիստում քննարկվեց «Երեւան համայնքում կենսունակության ավարտին մոտ գտնվող եւ ամբողջովին դեֆորմացված ծառերի փոխարինում արժեքավոր եւ գեղազարդ ծառերով» ծրագիրը:

Նիստին մասնակցեցին ՀՀ ԳԱԱ գիտական ինստիտուտների եւ կենտրոնների տնօրեններ, գիտաշխատողներ, Երեւանի քաղաքապետարանի ներկայացուցիչներ, ոլորտային մասնագետներ, շրջակա միջավայրի նախարարությունից, ԲՈՒՀ-երից, փորձագետներ: Նշվեց, որ ժամանակավորապես կդադարեցվի ծառերի փոխարինման ծրագիրը՝ ակնկալելով, որ քաղաքապետարանը գիտական շրջանակներից հիմնավոր փաստաթուղթ կստանա:

Ծառերի փոխարինման ծրագիրն արդիական է, սակայն ունի կարճաժամկետ բնույթ, եւ անհրաժեշտ է դիտարկել կանաչապատման եւ այլ բնապահպանական միջոցառումների իրականացումն ավելի երկարաժամկետ նպատակների եւ խնդիրների լուծման տեսանկյունից:

Առաջարկվում է մշակել Երեւան քաղաքի երկարաժամկետ բնապահպանական ռազմավարություն: ՀՀ ԳԱԱ մասնագիտացված կառույցները պատրաստակամ են համագործակցել եւ իրենց ներդրումն ունենալ հանուն կանաչ եւ էկոլոգիապես առողջ Երեւանի: Քննարկվեցին ծառերի կենսունակության վերաբերյալ տրվող գնահատականի հիմքերը: Նշվեց ծառերի կենսունակության եւ տապալման ռիսկերի գնահատման համար անհրաժեշտ սարքավորումների կիրառման կարեւորությունը:



Անհրաժեշտ է ձեռք բերել սարքավորումներ, որոնց միջոցով հնարավոր կլինի գնահատել ծառի կենսունակությունը, յուրաքանչյուր հատվող ծառի պարագայում ներկայացնել կենսունակության հետազոտության արդյունքները:Այն կբարձրացնի վստահությունը հանրության շրջանում: ՀՀ ԳԱԱ համապատասխան մասնագետները պատրաստ են աջակցել «Կանաչապատման եւ շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի աշխատակիցների վերապատրաստման հարցում:

ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ



# Ֆիզիկա. դասը վարում է գիտնականը

Վերջերս Երեւանի տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջում ֆիզիկայի դաս էր: Այն վարում էր Հայկական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր նախագահ, Ռուսաստանի բնագիտության ակադեմիայի պրոֆեսոր, «**Ազգ**» թերթի երկարամյա աշխատակից **Ստեփան Պատիկյանը**: Ներկայացվեց «Էլեկտրականության ազդեցությունը մարդու վրա», «Անվտանգության կանոններ», «Առաջին օգնություն էլեկտրահարված մարդուն», «Էլեկտրականության դերը մեր կյանքում», «Կայծակ» թեմաները:

Հարկ է նշել,որ Երեւանի տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջում սովորում են ավելի քան 650 աշակերտ եւ այն շուրջ 90 տարվա պատմություն ունի:

Անվանի գիտնական, վաստակաշատ եւ բազմափորձ դասախոս Ստեփան Պատիկյանը համատեղության կարգով «Արեւային էներգետիկա», «Սառնարանային տեղակայանքներ» է դասավանդում քոլեջում: Իր գիտելիքները սիրով փոխանցում է ուսանողներին եւ նպաստում մատաղ սերնդի կրթության նվիրական գործին:

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԳ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 11.04.2024, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Գինդ» տպարան ՍՊԸ, ք. Երեւան, Բագրատունյաց 70ա: